

# ՀԵՆՏՇԱԿ

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՏԱԽԻԱՏՈՒՆԵՐԸ

— — — — —

Բաւական ժամանակ է որ Շօայրադոյն Արևելքը մոռացութեան է տուել։ Մօսի՞ք։ Եւրոպական Համաձայնութիւնը գեռ եր հաշիւները կարգադրուած չէ համարում։ Զինաստանի հետ և զրահամար էլ նու այժմ աւելի քան երբէք անտարբեր աչքով է զիառում այն բոլորը, ինչ որ կատարուում է թխւրքիայում։ Եյստեղ նուաճուող ազգիրը կողովաւում, հրկիվուում, սպաննուում են և Եւրոպան, որ նրանց նկատմամբ առանձին պատասխանատուութիւն ունի սպանճնած — այդ ամենի առաջ լուռ, հետաքրքրութիւն իսկ ցոյց չի տալիս, զի ուրիշ աեղեր աւելի ստիպողական շահեր ունի պաշտպանելու։

Թռուրքը խրախուսուած այդ հանգամանքեց, աճապարում է իր տնային գործերը կարգադրել խոռվարար ազգերի հետ։ ուստի ազատձեռք է տուել եր կազմ և անկազմ ոյժերին գործելու։ — Վակիեղոնիան արեան, կրակի մէջ է, նրա հառաջանքը Եւրոպային համար է, գէթ։ իսկ Հայաստանը քանդւում, կործանուում, աւերակաց կոյտ է գտանում և նրա ձայնը, աղաղակը լող չկայ։

Եւ կատարուած այդ բարբարոսութեանց հանգեց, Եւրոպան անտարբերի սքեմ հագած՝ ոչ միայն չի ուզում իր անմիաս ազգարարադրելով, զիտողութիւններով թռուրքին «կանգնիր» ասել, այլ ի հարկին չի քաշւում բոցակիզուող ազգերին յօրդորելու որ հանդարտ մնան, խոռվառութիւն չհանեն, և մի փոքր առաջ երթալով՝ նա նոյն իսկ Համբարին պատասխանատու է բռնում տիրող կարգերի խանդարանը և նրան բանձնարարում ազգու միջոցներ ձեռք առնել, որպէս զի իր կայսրութեան զանազան մասերում տիրող խաղաղութիւնը չվրդովուի։

Բալքանեան փոքրիկ պետութիւնների մէջ անհամաձայնութեան խնձորը նորից երեան է եկել։ — Աերբիան աւելի իր ներքին գործերովն է զբաղուած։ Բուլղարիան ոչ թէ իր արտաքին, այլ նոյն իսկ ներքին գործերի մէջ աղատ չէ։ Մօնթէնէդրոն մեծամոլութեան ախտով է բռնուած։ Եւ այդ բոլորի ուղիղ հետեւանքն է, որ սլաւօնական

այդ փոքրիկ պետութիւնները Ոռուսիայի վարախը անցնելու շրջանի մէջն են մտել։ մի հանգամանք, սակայն, որ ապագային իրենց շատ սուզի պիտի նատի։

Ոռումանիան և Չունաստանը ոլաւոնական տարրերի ազգեցութիւնը հակակուելու համար ցանկանում են իրար հետ ընդհանուր համաձայնութեան դալ։ Խոկ այդ ամէն անհամաձայնութիւններից անմիջական օգտառողներն են իրենց հանրական թշնամին թռուրքը և զօրեղ հարևանները թէ իրենց ազգային և պետական շահը պահանջում էր որ երենք փոխադարձ բարեկամական կապերով կապուած լինէին և Բալքանեան պետութիւններից Գաշնակցութիւնը կազմէին ընդդէմ Օսմանցու և իրենց գոյութեանը սպառնացողներին։

Եւստրու ունկարիան և Ոռուսիան իրենց ուղղակի թշնամի են յայտարարում դէպի ամէն նըրանց, որոնք նսպատակ ունեն ալիրող կարգ ու կանոնը, քաղաքական ստացում կանգարելու և Մօսիկ Արևելքի մէջ ընդհանուր բոցավառում առաջ բերելու։

Անգիստիան՝ պարագաների բերմամբ, երբեմն կէս սրտով իր տօրիական քաղաքականութեան հովերն է առնում, և սակայն այդ ուղղութեամբ ընթացող իր նաւերի առագաստները անքան պատառուել են, որ երեսը ամօթից կարմրած շուտով շուռ է տալիս և յարմար առթին սպասում՝ որպէս զի թռուրքին իր վերջին մնաս բարեղ ասի։

Գերմանիան իր խաղաղ նուաճումներն է առաջ տանում և զրահամար էլ ամէն անգամ իր զրօշակը անպատութեան, ստորութեան տղմի մէջն թաթախում։ Դեռ ոչ մի հզօր պետութիւն այնքան չի արհամարհուել Արևելքում, ինչպէս և ամէն տեղ, որքան չտես Տետոնը։

Եւ այսպէս, ամէնքն էլ իրենց անմիջական շահի և բազուկների վրայ արդէն ունեցած բեռան համար՝ ցանկանում են որ Մօսիկ Արևելքում ներկայում եղած զրութիւնը շարունակուի, առանց մի այնպիսի դէպքի, որ կարող էր իրանց խաղաղութիւնը վրդովիլ։

Եյտպէս էլ կինէր, արդարեւ, եթէ իրերի ընթացքը և նրանց կանոնաւորելը բացարձակապէս կախումն ունենային պետութիւնների ներքին և արտաքին գործերը վարող պատասխանատու պաշ-

տօնեաներից: — Պահպանել եղածը, ունեցածը ընս  
դարձակել ախող տարրի շահի անսակէտից — այդ է  
պետական անձերի հոգացողութեան զլիաւոր ա-  
ռարկան և այդ ուղղութեամբ էլ նրանք ջանք են  
անում ընթանալ:

Սակայն խնդիրն այն է, որ գոյութիւն ունեցող  
կարգ ու կանոնի կողքին՝ հաւասարապէս գոյութիւն  
ունին ուրիշ իրողութիւններ էլ: — Դրանք՝ տան-  
ջուող ժողովուրդները, մարտիրոսուող ազգու-  
թիւններն են, որոնք անպատճ կերպով ամէն օր  
մորթւում, խողխողուում են, միայն այն պատճա-  
ռով, որ իրենց համար տարրական ազատութիւն  
են ուղում: Երդ, եթէ այդ բոլորի հանդէպ կան  
պետական անձեր, դիւանագէտներ, որոնց միակ ջան-  
քըն է եղածը շարունակել, գոյութիւն ունեցածը  
պահպանել, ապա նրանք, երեկի, մոռացել են, որ  
ջօրաւորի սրբ տակ ընկծուած ազգենն էլ ար-  
տադրում են անպատասխանատու անձեր, որոնց  
առաջին նպատակն է լինում քանդել, ոչնչացնել  
արդէն եղածը, խանգարել տիրող խաղաղութիւնը  
և ստիպել որ երեւան գայ իրերի նոր՝ աւելի  
ուղիղ դրութիւն:

Եզզերի պտամութիւնները որքան օրինակներ  
ունին հաստատելու այն ձշմարտութիւնը, որ ժո-  
ղովրդային շարժումներ, քաղաքական ու ընկերա-  
յին փոփոխութիւններ յառաջ բերողները ոչ թէ  
ժամանակի պատասխանատու, այլ անպատաս-  
խանատու անձերն են եղել՝ ամէն տեղ: Ճա-  
մանակի տիրող կարգերի գէմ ըմբոստացող այդ  
անպատասխանատու անձերն են, որ արձագանք  
են տուել մոնչող ժողովրդի ցաւերին, նրա կը-  
քերը, ցանկութիւնները իրենց մէջն են մարմնաց-  
րել և մարտի դաշտը դուրս եկել՝ իրեւ կազմակեր-  
պուած ոյժ՝ խոռվարար, ապստամբ, յեղափոխա-  
կան անուններով: Կրանք են՝ այդ անպատասխա-  
նատուները, որ իրենց արեան գնով փլցրել են  
հինք և նոր կեանքի, նոր իդէալի ձանապարհ-  
ներ հարթել:

Եթէ տիրող կարգ ու կանոնից գոհ պետական  
անձը ունի իր բանտը, աքսորը, կախաղանը: Ե-  
ղածից գժգոհ անպատասխանատուն ունի իր  
պրօպագանդան, ազիտացիան, կարմիր Դրօշը:

Եթէ երկու կոռուող ոյժերից մին ներկային  
է պատասխանատու, միւսը՝ իդէալին:

Եթէ դիւանագէտն է որ ունի ներկան, —  
անպատասխանատուն | է որ ունի ապագան:

Եւ քաղաքական ազատութիւն վստիկող որքան ազ-  
գեր, որքան պետական անձեր այսօր իրենց եր-  
ջանկութիւնը, իրենց դիրքը պարտական են այն  
անպատասխանատուներին, որոնք անցեալի մէջ ա-  
նիծուել, կախաղան են բարձրացուել՝ պատայից  
պաշտուելու, սրբագրծուելու համար:

## Ն Ա Մ Ա Ր Ի Ե Ր Ձ Ն Կ Ո Ւ Ց

25 Մարտ, 1901

1895—96 թուականներում Օսմանեան չորրորդ  
բանակի համար „պատիճ“ մը գարձեր էր քեռին: Իր  
կտրիմներովն ամրացած հայրենի ազատաշունչ լեռնե-  
րուն մէջ, մինչև 1899-ը, հերոսութեամբ մարտնչե-  
ցաւ իր վրայ զօկուած ձիաւոր և հետիոտն գումար-  
տակներուն դէմ: Սակայն ցանկանալով իր զինուորական  
գործին աւելի մեծ չափով ծաւալ տալ՝ քեռին արտա-  
սահման էր անցեր: Նորէն Հայրենիք վերադարձն և  
այս անգամ տեսնուած բանի մը քուրդ բէկերու  
հետ: „Երբ 10—20.000 հայեր միացած ըլլան մէկ  
տեղ մը, առաջին ձայնին մենք հոն կը թափինը և  
ընհանուր ոյժով թուրքի դէմ կը կոռւենք, աշա մեր  
վերջնական խօսքը.“ — այս էր եղած այդ կարևոր ան-  
ձերուն վերջնական պատասխանը, որուն ստուգութիւ-  
նը ամենայնիւ երաշխաւորելի է, աչքի առաջ ունե-  
նալով լսողներուն տարբիներէ ի վեր ցոյց տուած ուղ-  
ղամտութիւնը և մինչև վերջը թուրքերուն ընդդիմա-  
գրելու հանգամանքը:

Քեռին այժմ բանտն է: Զերբակալումը հետևեալ կեր-  
պով եղաւ:

Երբ քեռին բաթումէն Տրապիզոն կանցնի, այն տեղ իբրև  
կասկածելի անձնաւորութիւն մը կը ձերբակալուի կա-  
ռավարութեան կողմէ և թևերը կապուած կը յանձնուի  
երկու զինուորների երգնկա բերելու պայմանով: Ճանա-  
պարհի գեռ կէսը չասած զինուորներուն ձեռքէն կեր-  
պով մը ձողոպրելով կը փախչի և յետոյ ծպտուած քա-  
ղաք կը մտնէ և տասն օրուան չափ գաղտնի կապրի  
Օր մը հանդիպելով իր վաղածանօթ բարեկամ Մչիկեա-  
նին — որ քաղաքին առաջնակարգ վաճառականներէն մէկն  
է — խօսակցութեան կը բռնուի անոր հետ: Մչիկեա-  
նը զինքը կը համոզէ որ անձնատուր լինի. ո Գնա կա-  
ռավարութեան յանձնէ ինքնինքն ինքնի կը լուսա-  
տելը իմ պարտականութիւնն թող ըլլայ! — այսպէս  
կը թելադրէ չօրբածին: Քեռին, գժբաղդաբար, խաբ-  
ուելով իր բարեկամի խօսքերէն, այդպէս ալ կընէ:  
Վալին բանի մը քաջալերական և յուսադրիչ խօսքեր  
ըսելէ վերջ — որ վերջապէս թողեր և հեռացեր է ա-  
ւազակներէն — չի խստանար անմիջապէս աղատ  
թողուլ, այլ կը հարկադրէ որ քիչ մը ժամանակ զին-  
ուորներուն քով սպասէ, մինչև որ Սուլթանին հեռա-  
գիր տայ և պատասխանը առնէ: Վալին իր մեծահոգու-  
թեան ապաստանողը այսպէս ընացնելէ վերջ՝ հետև-  
եալը կը հեռագրէ Սուլթանին. „Հայ աւազակապետ մը,  
որ շատ ժամանակէ ի վեր կաշխատուէր բռնելու և  
ձեռք չէր ընկներ, հիմա ինքն իր ոտքով եկեր և անձ-  
նատուր եղեր է, ինչ ընելու է:“ Սուլթանը Մէծի-  
տիէի պատուանշանի մը շնորհումը կը հեռագրէ վա-  
լին, իսկ լեռներ թնդացնող մէր հերոսը մշտական  
բանտ — Ալիսանեան գալուստի քով — կուղարկուի,  
ուր շղթայակապ՝ իր սկ օրերը կողբայ և վաղածանօթ  
չօրբածին կանիծէ:

Վիճէ մըն ալ մէր զազրալի Մչիկեանի մասին  
Այս գարշելի անձը թուրք կասավարութեան առաջին  
նեցուկն է և իր հայրենակիցները ամէն կերպ հա-  
լածելը՝ իրեն պարտականութիւն համարած է, իսկ յե-  
ղափոխականները չնջելը՝ կեանքի նպատակը: Այլ ևս  
խարդաւանանքներ չէ մացած, որ ըստ չոլո-  
րովն անմեղ հայերու դէմ. և այս բոլորը իր անձ-

նական շահի համար և կառավարութեան աչքին հաւատարիմ երեալու գիտումով:

Այս մարդը 97-ի կոտորածներէն յետոյ երգընկայի ժողովուրդը ամէն տեսակ հալածանքի ենթարկելէ վերջ՝ դերջան կանցնի և յալտնի տէրէպէյի հասան—աղա քուրդը իր հետ առնելով՝ հայ գիւղերը կը մտնէ իր տուած դրամները գանձելու պատրուակով:

Մշիկեանը ամէն տուն կը մտնէ և իր պարտապաններու օձիկը կը բռնէ ու վաշխառուական օրէնքով՝ մէկին տեղ հայրիւր կը պահանչէ: Արդէն խեղճ գիւղացիք ի՞նչ ունէին որ ի՞նչ տային ... ամենէն դիւրակեացը անդամ հաղիւ չոր հաց մը ունէր: Եւ ահա այդ հանդամնքն էր որ մեծապէս պիտի նպաստէր Մշիկեանի վաղուց փայտիայած մտքերու իրագործմանը: Հասան—աղան ալ չունեօր պարտապանը ոտքերուն տակը կառնէ և կը սկսի տրորել. խեղճին միսը, ոսկուը, այնքան կը ցաւի որ տանջանքէ ազատուելու համար Մշիկեանին ձեռքին մէջ կը դնէ իր կալուածին թղթերը և անոր վրայ կը դարձնէ իր պապենական ժառանգութիւն եղած ագարակները, խոտանոցները և տները:

Մշիկեանին զոհ գացած ընտանիքներու թիւը հարիւրաւորներու կը հասնի:

Ծառուրի հալածանքը կարծես բաւական չէր, որ Մշիկեանի պէս աղաներ ալ օգնութեան կը հասնեն և մնացածը իրենք կը լրացնեն: Մեր դժբախտութիւնն է որ Մշիկեանները տառնձնացած տիպեր չեն, այլ շատ սովորական և բազմաթիւ:

## ԱՆՄԵՌԸ

### ՆԱՄԱԿ Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐԻՑ

17 Ապրիլ, 1901

Դիեռ ոչ մի կառավարութիւն այնքան ակնյայտնի կերպով երեան չէ բերած իր դժոխային ծրագիրը — բացարձակապէս ոչնչացնել մի դժգոհ ժողովուրդ՝ որքան որ թուրք կառավարութիւնը այժմ ի գործ կ դնէ հայերուս նկատմամբ:

Կեղեքում, յափշտակութիւն, սպանութիւն, կանանց առևանգում — ասոնք այն տատիճան սովորական երեսոյթներ դարձած են, որ մեր ջիղերը այլ ևս թըմբեր են և զգալու անկարող, այնպէս որ եթէ մէկ օր մը միայն այդպիսի դէպք մը տեղի չունենայ, կարծենք թէ բան մը պակաս մնաց մեր առօրեայ կեանքէն....

Այստեղի հայութեան գրութիւնը բնորոշելու համար մէկ խօսքով լսեմ՝ հայութիւնը կմեռնի, կամ աւելի ճիշտը՝ հայութիւնը կ' սպաննեն. և այդ սպանութիւնը ակներեւ կը կատարուի, առանց ամենափոքր քօղարկութեան:

Իմ նախկին նամակներէս յայտնի է թէ Ռուս կառավարութիւնը ի՞նչքան պապեր ցրուած էր այս կողմերը: Ատոնք քաջաքային, ընկերային ամէն երջանկութիւն կը խոստանային անտէր, անօգնական, խեղճ, հայ գիւղացիներուն՝ պայմանով որ օրթոսոքութեան գիրքը նետուին:

Եթէ լսեմ որ միամիտներ չգտնուեցան այդ թակարդին մէջը իյնալու — ատիկա շատ սիսալ կը լինէր. բայց և այնպէս նկատելին այն է, որ ի գին հայրենի

կրօնի մէկ օրուան մէջ երջանկութիւն վնառողները շուտով համոզուեցան, որ „զէլի էն գիքօն, զէլի էն գիքօն“, փոխուած բան մը չկայ, և սկսեցին իրենց փրկարարներն ու բարերարներն խաբեբաններ համարել...

Պապական ժանամաստը կարծես հերիք չէր, վերջերս բաւական մեծ թուով միսինարներ և փաթէրաններ ալ երեւցան — ասոնք ալ ելեր են իրենց ապրանքը աճուրդի հանել:

Երեցածին նայելով՝ Պօլսոյ կեդրոնական կառավարութիւնը կհակառակէ կրօնական օտար ազդեցութեանց երեան գալուն: Սակայն տեղական պաշտօնեաններուն կարծիքը այդպէս չէ: Ասոնք հաւատացած են որ հայութիւնը քայլայող ամենէն յաջողակ տարրերը եւրոպական և ամերիկեան մարդուններն են, որովհետև անոնք ոչ միայն իրենց փարախիւը մտնողները կը կղիացնեն, կը կտրեն իրենց հայրենակիցներէն, այլ և կրօնական ցնորաբանութիւններով գլուխնին լեցնելէ վերջ՝ սրտերնին ալ կը դարձնեն դէպի ուրիշ ազգերը, ուրիշ երկիրները:

Եւ որովհետև թիւրբիայի մէջ տեղական իշխանութիւնները այն չափ անկախ են, որչափ Համբարձու իր պալատին մէջ, ուստի այդ նկատումներէն առաջնորդուելով, անմտաբար կը նպաստեն մարդուններու շահատակութիւններուն. մանաւանդ որ ատկից իրենց քըսակը պարարտացնելու հանդանքները շատ են:

Այս բոլորէն վերջ, չկարծէք թէ մենք յուսահատուած ենք. — Երբէք: Մեզի համար այժմ բան երբէք աւելի պարզ է և անհրաժեշտութիւն դարձած՝ վճռողական դիրք բանելը:

Եւ յանուն Հայրենիքի փրկութեան կը խնդրենք որ առաջ ձեռք առնուի ողոնդրէսի խնդիրը, և որոշ եղբակացութեան յանդուի, որովհետև ատիկա մեզի համար կենսական խնդիր մ'է:

ՍԻՓԱՆ

## ՊԱՐՍԿԱ ԹՐՖԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽ

10Մայիս, 1901

Ժառուք կառավարութիւնը վերջերս սկսել է ամրացնել իւր պարսկական սահմանները և կրկնապատկել է սահմանապահ զօրքերի թիւը, այդ կերպ նացանկանումէ արգիլել սահմանը անցնող հայ յեղափոխական խմբերի մուտքը Տաճկաստան: Արդէն վաղուց է որ սահմանակից Սալմաստ և Խոյ գաւառները թուրք կառավարութեան կողմից նկատուած են, որպէս հայ յեղափոխականների բանակատեղի, իսկ տեղական հայ ժողովուրդը՝ այդ յեղափոխականներին քաջալերողներ և օժանդակողներ: Այդ գաւառներում ապրող մի բուռն հայերը վերջին տարիները թուրք կառավարութեան մտառնջութեան առարկայ դարձան և նա ամէն կերպ աշխատեց բնաջնջ անել, կամ հեռացնելի իւր սահմաններից այդ վնասակար տարրերը: Այդ նպատակին համար Կարմիր գաղաքային այս պատուի միջնորդը է կարողանայ հասցնել, որոնք գուրս էին իւր պետութեան ասհմաններից, գիմեց իւր ճիշտաղային միջոցներին: Մի օր յանկարծ Ատրպատականի զանազան քաղաքներում երեւացին Պօլսից եկած թուրք Խլէմաններ և սօֆթաններ, որոնք մզկիթներում իրենց խօսած բարոզներով սկսեցին գրդուել պարսիկ ամբոխը պիղծ գեավարների դէմ, ա-

ուաշարկելով միանգամայն կոտորել բոլոր հայերին։ Օսմաննեան հիւպատոսներն էլ ոչ մի առիթ չէին փախցընում։ Հայերին վլասելու գործում։ Վերոիշեալ բարողների և Թաւրիզի Օսմ. Հիւպատոսի խարդաւանանքների արդիւնքն էր 197, մարտ 20-ին Թաւրիզում պատահած յայտնի Խառնակութիւնները. բարեբաղդաբար Թաւրիզի գէպքը ուրիշ տեղերում արձագանք չը դառւ, որից ստիպութ թուրք կառավարութիւնը իւր ամբողջ ուշադրութիւնը գարձեց միայն Սալմաստի հայերի վրա։ Խոյի և Սալմաստի Օսմ. Հիւպատոս բիզա բէկի պահանջման Սալմաստի հայաբնակ գիւղերը ենթարկուեցին աննկարագրելի խուզարկութիւնների և տուգանքների, նոյն իսկ սպանութիւնների, որոնց պատճառով Սալմաստի բարեկեցիկ հայ համայնքը տնտեսական կատարեալ բայրայման մատնուելով սկսեց գաղթականութեան դիմել։ Հըճում էր Կարմիր Գաղանի ներկայացուցիչը, տեսնելով իւր սարբած խաղերի յաջող ընթացքը, սակայն իւր նպատակին վերջնականապէս համար նրան մնում էր գեռ ամենագլխաւորը, այն է, հեռացնել Սալմաստի հայ ազգաբնակութիւնը Սալմաստից, բայց այդ նրան չը յաջողուեց, չը նայած որ բիզա բէկը շատ աշխատեց գատաւոր Շահզադէի միջոցով համոզել Պարսիկ կառավարութեանը՝ գաղթեցնել Սալմաստի հայերին և բնակեցնել Ղարադաղում։ Այդ անաջողութիւնից յետոյ թուրք կառավարութիւնը գարձեալ դիմեց իւր հին և փորձուած միջոցին։ Տաճկական կառավարութեան դըրդմանք սահմանագլխի բիւրդ ցեղերը (Մազրակցի, Շիկակ և այլն) սկսեցին յարձակումներ գործել սահմանագլխի հայ գիւղերի վրայ և կոտորել բնակիչներին։ Քրդական այդպիսի մի արշաւանքի ամբողջովին զոհ գնաց Խոյ գաւառի վառ գիւղը, որի բնակիչները (մօտ 250 հոգի) բոլորն էլ կոտորուեցին անխնայ կերպով։ Այդ կոտորածի ժամանակ էր որ սպանուեց մեր ընկեր Զեքրայիլը։ Ենթարկուելով շարունակ գրդերի այդ յարձակումներին Սալմաստի Ասլանիկ, Հմբանավա, Ըսկավա, Բարեկի, Վարդան և այլ գիւղերը, որոնք աւելի մօտ էին սահմանին, բոլորովին գատարկուեցան իրենց հայ բնակիչներից։ Պարսիկ կառավարութիւնը. թէն փորձում էր այդ չարիեների առաջը առնել սակայն իւր թուլութեան պատճառով չը կարողացաւ այդ ուղղութեամբ դրական միքայլ առնել։ Ներկայում թուրք կառավարութիւնը տեսնելով որ անկարող է իւր սահմանները գատարկել հայ ազգաբնակութիւնից, սկսել է ամրացնել սահմանները և ինչպէս առում են, մտադիր է պարսկական սահմանների վրայ բնակեցնել կովկասից եկող միւլիւման գաղթականներին. սակայն վերջինը չը գիտենք թէ որ քան ձիշտ է։ Վասպուրականից խիստ անմսիթար լուրեր են ստացւում։ Վանից ստացած մի նամակից հետեւեալն ենք բաղում։ Անողովագութը ահ ու սարսափի մէջ է. գիւղերից ամէն օր կողապուտների և սպանութիւնների լուրեր կշանին բաղար.. Չը նայած որ ժողովուրդը վերջին ծայր չքաւարութեան մէջ կը գտնուի, կառավարութիւնը գարձեալ կը շարունակի ամենախիստ միջոցներով տուրքեր հաւաքել...։ Վերեմ թուրք կառավարութիւնը երբէք դադարեցրած կամ թուլացրած չէ իւր գէպի հայերը ունեցած ատելութիւնը և հալածանքները. ինչպէս որ շատերը կը ճանին հաւատացնել, այլ նաև ամենայն խառնու-

թեամբ առաջ է տանում իւր հայաջնիջ բազարականութիւնը որին ապացոյց է երկրի ներկայ չարատանջ կացութիւնը։

MARS

## ՀԱՅՈՒՏԱԿԻ ԴԱՐՈՒՆՔ

ԷԼ ո՞ր է ծիծառ, էլ ո՞ր է սոխակ. Ո՞ր հաղարերանգ թուլուններ գալնան, Ո՞ր են թիթեռներ, բըզէղ բովանդակ, գոյնզգոյն ծաղիկը, դալարիք լերան։ Ծառեր, ծաղիկներ ո՞ր են, ի՞նչ եղան, վճիտ աղբիւրներ ինչո՞ւ ցամքեցան, Ո՞ւր կարկաչահս գետակներ գալնան, գետեր, վտակներ ինչո՞ւ ըորացան։ Ծիծառն գարձաւ, էլ բայն չգտաւ. Աւերակ երկրում նա է՞ր պիտ' մնար. Սոխակն, աւազ, էլ վարդ չտեսաւ, Առանց վարդի նա ի՞նչպէս դիմանար։ Արուն թիթեռը սար ու ձոր ընկաւ, Մի ծաղիկ, մի խոտ անգամ չգտաւ. Բզեզն էլ թողեց այդ տխուր աշխարհ, իւր ըլլբօտանաց էլ տեղ չգտաւ։ Երբեմըն դըրախտ, այժմ աւերակ՝ Այս դըրբախտ երկրին սե քոլ է պատել. Երբեմն բազմամարդ, այժմ անբընակ, Ծունչ, կենդանութիւն, ասես, չի մնացել, Աւեր է սիրել չարագործ ձեռքը, Քանդել է, թալնել այս շէն երկրը, Տուն, անտառ, այդի, արտ ու անգաստան բոլորն գարձել են չար սովից կոխան։ Բայց ահա բուրեր ժայռերի վրայ Վայում են, ողբում, սարսափ տարածում. Ահա ագռաւներ գէշերի վերայ Անարդ սովորի պակասն լցնում։ Ահա մի ոգի աւերակաց մէջ իւր սիրելիի մարմինն է մնառում. Ողբում է խեղճը ցաւօք սիրատենչ. Աւեր հայրենեաց սառ հողը գրկում։ Բայց ահա, յանկարծ մի դառըն ժպիտ . . . Եւ բաջի սիրտը բաբախնց անվերջ. Վրէժիւն ԴրՈՒԹԻՒՆ, գոչեց քաջը պինդ Եւ անհետացաւ աւերակաց մէջ . . .

## ՊՅԲ ՀԲԱԿԻՒՔ

Գնա՛, որդե՛ակ իմ, սար ու ձոր անցի՛ր, Տե՛ս ուշի ուշով խեղճ հայի երկիր. Տե՛ս այն բնական դրախտը, որ զաղիր Ու լըպիրշ թուրքը գարձել է մոխիր։ Տե՛ս երանաւէտ այդ երկրի ներկան, Որ սըգուր հարսի և կուսի նման Իւր չքնաղ գէմիկին ու սրտին սիրող, Քաշել է սգոյ ու վշտի սե քող։ Տե՛ս արիւնահսու լական գետակներ, Չորցած ու ցամքած վծիտ աղբիւրներ, Կմէ՛ հառաջանքն թշուառ մայրերի, Աղնասուններն ամուսինների։

Ուխտէ՛, որդեակ իմ՝, այս բոլորից յետ  
Սըրբել արտասուբն ազգիդ սրտաբեկ,  
Ուխտէ՛ չդառնալ հայրենի քո տուն՝  
Մինչև որ ազգդ չըլինի կանգուն

Ը Ա Հ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐԻ ՃՈՒԲՁՁ

ԹԻՒՐ ՔԻԱ

Համիսլամաական գաղափարը հետղչետէ մեծ ծաւալ  
է առնում: Այդ շարժումը երկու տեսակ ազգեւր և  
բնաւորութիւնը ունի, մին՝ կառափարական, միւսը՝ կրօ-  
նտական: Առաջինը արտադրութիւն է Պօլսոյ կառավար-  
չական շրջանների և նպատակ ունի բոլոր մահմետա-  
կան երկիրները իրարու հետ սերտ կերպով կապել և  
նրանց ամրապնդմանը նպաստել: Երկրորդ շարժման փաս-  
աբանները միայն կրօնականներ են, որոնք ձգտում  
ունին պահպանել մահմետական կրօնի մաքրութիւնը ու  
իրենց ազգեցութիւնը տարածել բոլոր միւսլիւմն կա-  
ռավարութեանց վրայ, մահմետական օրէնքը խստիւ պահ-  
պանելը իրենց կէտ նպատակին դարձնելով: Համիսլա-  
մութեան առաջին ձեւ խիստ թշնամի է յառաջդրիմու-  
թեան և եւրոպական քաղաքակրթութեան: Մինչև ցարդ  
երկրորդ ուղղութիւնը առանձնացած էր և իրեն հեռու  
էր պահում քաղաքական դործերի մէջ խառնուե-  
լուց, բայց վերջերս նա էլ ընդունեց քաղաքական ու-  
րոշ կերպարանը, զի այժմ առանձին դիրք է բռնել  
գէպի նգիպտոսի խտիվը: Յայտնի թէ վերջինս Սուլ-  
թանի հետ լաւ յարաբերութեան մէջ չէ, քանի որ  
ապաստան է տալիս երիտասարդ Թուրքերին ինչպէս և  
զանազան յեղափոխական տարրերին:

Երկրորդ կարգի ուղղութեան համակիրներից վեր-  
ջերս կազմուել է մի ՀԱՄԻՍԼԱՄԱԿԱՆ 'ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ',  
որ արդէն ճիւղաւորուած է բոլոր մահմետական աշ-  
խարհներում և ունի իր սեպհական կազմակերպու-  
թիւնը, ծրագիրը, գործող յասնախումբը և պրօպա-  
գանտարի էլ բաւականաչափ նիւթական միջոցները: Ըն-  
կերութեան մասնաւոր առարկան է հնազանդութեան  
մէջ պահէլու բոլոր հաւատացեալներին՝ գէպի իրենց նուի-  
րական օրէնքները և նրա պաշտօնեանները: Այս ընկե-  
րութիւնը, որի մասինդեռ ոչինչ յայտնի է եւրոպային,  
իր կեղրուատեղին փոխադրու՞ է մի երկրից գէպի  
միւսը, նայելով հանգամաններին և պահանջներին: Նա  
գործում է ուր որ միւսլիւմաններ կան — այսինքն Օս-  
մանեան կայսրութեան մէջ, կովկասում, Պարսկաստա-  
նում, Կեդրոնական Ասիայում, Եղիպտոսում, Սուլա-  
նում, ամբողջ Հարաւային Աֆրիկայում, Հնդկաստա-  
նում, Հնդկական Արխիպեղադրուում և ուրիշ տեղեր: Ընկերութիւնը գտնուում է մեծահամբաւ դիտնական և  
շատ ժողովրդականութիւն վայելող տառուածարանների  
դեկապարութեան ներքոյ: Գաւառների մէջ ամենայար-  
գելի անձնաւորաւթիւնները, որոնք իրենց շրջանի մէջ  
անսահման իշխանութիւն ունին, տեղական մասնաճիւ-  
զերի գլուխն են անցած և յուզող-դրդողի պաշտօն ու-  
նին: Նախագահը համբաւաւոր հեղինակ, ճարտարա-  
խոս և ներհուն մտածող մէկն է: Կա նորերս լոյս է ըն-  
ծայել քաղաքական մի յայտարաբութիւն կամ պարս-  
ւագիր, որ Վաւրանից մէջ բերուած կտրների վրայ յեն-  
ուելով՝ շատ չափաւոր և ընտիր լեզուով փաստում է

թէ ներկայումս խոյամի ամենամեծ թշնամին խոյիվ՝  
Աբբաս փաշան է, որովհէտև իր խալիփայութեան ներ-  
քոյ խալամական անկախ թագաւորութիւն կազմելու ա-  
նրօնով է տառապում:

Դ Որպէս զի իր նպատակին համենի, — ասում է Յայ-  
տարարութիւնը — նա դիմում է այնպիսի միջողների, որ  
անխուսափելի կերպով միւսլիւման զանազան տարրերին  
դէպի քայլարումն պիտի առաջնորդէ: Կա դարձնում է  
Եգիպտոսը յեղափոխութեան կեդրոն, ուր հաւաքւում  
են յայտնի անբարոյական, օրինազանց և զեղութեան  
գործող մարդիկ: Խտիվը օգտուում է կայսերական ըն-  
տանիքի մի քանի անդամների միամուռութիւնից և Երլգը-  
քէօշի սենեկապետաների ու քարտուղարների ընչաքաղ-  
ցութիւնից՝ իր մտքերին գործադրութիւն տալու հա-  
մար: Կա իրեն նեցուկներ է որոնում ընկերութեան առ-  
մենաստորին խաւերի մէջ, որոնց տգիտութիւնից և մո-  
լեռանդութիւնից օգտուելով՝ Նրանց ուզում է գէպի  
յեղափոխութիւն մլել, իսկ այդ բոլոր հետեւանքը առ-  
զէտալի պիտի լինի բոլոր միւսլիւմանների համոր, ինչ-  
պէս նաև ընդհանուր խաղաղութեանը:

Յայտարարութիւնը վերջանում է մի կոչով, ուղ-  
ղուած պետութիւններին և միւսլիւմաններին. Կիբեռ  
անհրաժեշտութիւն գահընկէց անելու խտիվին, որ որու  
է սերմանում միւսլիւմանների մէջ և աշխատում առաջ  
բերել մի վտանգաւոր յեղափոխութիւն:

Յայտարարութիւնը գլխաւոր Խլէմայի կողմից բո-  
լոր մասնաճիւղերին է ուղարկուած, որպէս զի ստորա-  
զրեն. դրանից յետոյ է որ պիտի հաղորդագրուի Սուլ-  
թանին և եւրոպական պետութիւններին:

Տերող կարծիքն է թէ Համիսլամական Ընկերու-  
թեան լոյս ընծայած այդ յայտարարութիւնն ինքնա-  
բերաբար չէ, այլ հետեւանք բարձրագոյն թելադրու-  
թեան, որովհէտև միւսլիւմանները քաղաքական յայտա-  
րարութիւններ հանելու մէջ միշտ վերապահեալ դիրք  
ունին: Խսկապէս դա մի խարդաւաններ է, որ Համի-  
տի անմիջական նպատակներին ուզում է արդարու-  
թեան մի երկոյժ տալ և կողմնակի կերպով իրեն  
հետ միացնել նաև պետութիւններին...:

Կասկած չկայ որ պարսաւագիրը գեսպաններին  
հաղորդելիս, կարող է մի փոքր իրարանցում առաջ  
բերել. բայց քաղաքական ամէն շրջաններում՝ նախա-  
պէս համոզուած են որ Համիսլամական Ընկերութիւնը  
այս անդամ էլ կվիժի, ինչպէս որ եղան այդ նպա-  
տակով եղած առաջին փորձերը:

\* \* \*

Հանկանալով օգտուիլ պետութեանց միջազգային գըժ-  
ուարութիւններից, Սուլթանի կառավարութիւնը ուղեց եր-  
կար ժամանակներից ի վեր իր փորյիայտծ միտքը իրագոր-  
ծել — օտար փոստաները վերացնել և այդ նպատակով  
էլ նախապէս յղացուած ծրագրով՝ ամսոյս Ծ-ին բռնուե-  
ցան Թիւրքիա ներմուծուած օտար փոստաների համար  
նշանակուած բոլոր նամակապարկերը:

Ծրբագան այդ յանդնութեան առաջ շահագլր-  
դիւ պետութիւններից Քրանսիան, Անգլիան և Աւս-  
տրիան մինչև վերջ ամուր և վճռական դիրք բռնեցին,  
չնայելով գերմանիային ցանուածանութեանը:

Գրանսիան առաջարկել էր եռանդագին միջոց —  
նաւային ցոյց: Բոլոր պետութիւնները համաձայնել է-  
ին, նոյն իսկ Ռուսիան, որ մայիս Ծ-ի պատահածի մէջ  
և ոչ մի վնաս էր կրել: Կառային ցոյցը անխուսափելի էր,  
եթէ Տաճիկը տեղի չտար:

Բայց այդ գէպի մէջ առանձին չետաքրքրութեան արժանի է գերմանիայի խալացած գերը, որ միանգաւմայն ցոյց է տալիս իր գիւանագիտական յարաբերութեանց ստոր ոգին: Մայիս 6-ին, այսինքն նամակապարկերի բռնելու յաջորդ օրը, Սուլթանը մի իրատէով հաւանութիւն տուեց Հայտար ֆաշայ նաւահանգստի մէջ կատարուելիք աշխատութիւններին, որի արտօնատէրերը Փոքր Ասիայի Երկամուղային Ընկերութեան տէրերը՝ Գերմանացիներ էին: Մայիս 15-ին՝ երբ ընդհարումը իր գագաթնակէտին էր հասել և պետութիւնները, գերմանիան էլ իրեւ թէ միասին, վերջնագիր պիտի մատուցանէին — Հրատարակուեցաւ մի երկրորդ իրատէ, որով հաստատում էր նոյն այդ ընկերութեան կանոնագիրը՝ իրենց արտօնավայրերը շահագործելու համար: Աչքի առաջ ունենալու է որ գերմանական դեսպանը այդ իրաւոնքները ձեռք բերելու համար մի տարուց աւելի աշխատում էր և նոյն իսկ 150,000 օսմ. սոկի կանխավճար էր Խոստանում, բայց չէր յաջողութեան զորաւոր ընդդիմությութեան բաղնելով:

Եւ ահա այդ արտօնութիւնները ունենալու համար ոչ միայն գերմանիան լքեց պետութեանց համաձայնութիւնը, որոնց հետ մինչ այդ միացած էր համարում, այլ և այնքան ստորացաւ որ առաջին օրն իսկ Թուրքերի ականջը հասցրեց թէ նաւային ցոյցի առաջարկը Գրանիցի կողմից էր եղել, և գրանից յետոյ էլ բերլինի թրբական դեսպանի միջոցով Սուլթանին իմաց տուել՝ թէ իրեն յաջողուել էր Ընդլային յետ կանդնեցնելու նաւային ցոյցին մասնակցելու գաղափարից:

Համբէրը շուտով համոզուեցաւ որ իր հաշիւների մէջ սխալուել էր և առանց գերմանիային էլ պետութիւնները նաւային ցոյցը պիտի կատարէին, և արդէն Գրանիսիական, Անդղիական ու Աւտորիական Միջերկրականի նաւատորմիջները հրաման էին ստացել պատրաստ լինելու: Սուլթանը շատ լաւ գիտէր, թէ մինչև ուր կարող էր առաջ երթալ — զի իր գէմ կեցողերը անզէն ժողովուրդներ չէին — ուստի խայտառակաբար տափկցաւ, միանգամ էլ համոզուելով՝ որ գերմանիան ամէն առիթից օգտուող և իր շահերը առաջ քող է՝ պատրաստ վըճռական բոպէին իրեն իր բախտին թողնելու:

Գերմանիայի պատերը ևս աւելի տգեղ կերպով երեան եկաւ և այն գէպում, երբ Տէվֆեկ փաշան դեսպաններին ներկայանալով պատահածը ստորին պաշտօնեալի ձեռքով գործուած սխալ՝ համարեց և Statu quo Ante խնդրեց, այդ առթիւ եղած խօսակցութեան միջոցին ցոյց էր տուել, որ վերջնագրի բովանդակութիւնները մինչև անգամ տեղեկութիւն ունելու, թէ ուրոշուած էր այդ բանը խիստ գաղտնի պահէլ:

Լոնդոնի Morning Leader-ը (28 Մայիս) գերմանիայի արած այդ գաւաճանութեան մասին խօսելիս, չի մուշանում յարել և հետեւելու. «Յիշելու արժանի է նաև այն հանգամանքը, որ հայկական բարենորոգումների համար մզուած արշաւանքի ժամանակ, ոչ միայն գերմանիան ամենավճառական բոպէին լքեց երրոպական համաձայնութիւնը, այլև նախապէս հաղորդել էր Սուլթանին բարենորոգումներ այն ծրագիրը, որ հազիւ գեռնոր էր խմբագլութել դեսպանների կողմից և որի համար որոշուած էր խօրին գաղտնիք պահէլ: Գերմանիայի այդ ժամանակ ցոյց տուած ծառայութիւնները վարձատրուեցան նրանք, որ մի քանի կարևոր վաճառականներ իրենց ցան-

կացած արտօնութիւնները ստացան: Եւ դա էլ իգին հայ արեան:

Յիշուելու հանգամանքներից մէկն էլ այն է, որ հայկական կոտորածների առթիւ ոքոնի միջոցներից Սոյսուող Ուստահան այս անգամ այդ փրկարար միջոցը անհրաժեշտ էր համարել և իր գործակցութեան պատրաստութիւնը յայտնել:

Ուրեմն, ոչ միայն օտար նամակատները մնացին այն՝ ինչ որ էին, — և բաց ի դրանից Սալօնիկի մէջ բրիտանական նոր փոստատուն էլ բացուեց, — ոչ միայն Սուլթանը անամօթաբար ուրացաւ իր արածը, այլ և նա կուլ տուեց իր կառավարութեան ծանուցագրերի յետ ուղարկուելը — մի հանգամանք, սակայն, որ casus belli-ի ամենայարգելի պատճառ կարող էր համարուել, եթէ իր արժանապատուութիւնը կորցրած Թիւրքիայի տեղ մի ուրիշ պետութիւն լինէր:

Այս էլ մի նոր իրողութիւն, որ Պահանջ ու ունեցող ազգերին նորից համոզիչ օրինակ ծառալի, որպէսզի չէ համարուին և իրենց դատը շարունակեն, զի տան մէջ ապրողը արդեամբ տան տէրը չէ:

## ՓՐԱՆՍԻԱ

Ուստահան պաշտօնական շրջանները և բոլոր Դիւանագիտական մարմինները համոզուած են, որ Գրանսիական արտաքին գործոց նախարար Դելկասսէի Պետրորուգ այցելութեան հետևանքներից մէկն էլ այն եղաւ, որ միանգամից վերջ տրուեցաւ այն բոլոր տարածայնութիւններին, որ վերջին տարիներս ծագել էլ էրկները Արևելեան Խոդրի, Շայյըրագոյն Արևելքի և Արևմտեան Երրոպայի առթիւ:

Հիմունք ունեցող կարծիք է, որ Գրանսիայի և Խուսիայի միջև լնդունուած և որոշուած է, բոլոր հանգամանքների համար, հանրական գործողութեան մի ընդհանուր ծրագիր՝ այն բոլոր խնդիրների նկատմամբ որոնք մօտիկ ապագայում միջազգային քաղաքականութեան մէջ կարող են երևել վերև յիշուած երեւելու թէ գործիք միջուկան առաջարկութիւնների առթիւ, և մանաւանդ որ այդ բանը Գրանսիական և ուստական նախարարների միջև առանձին խօսակցութեան առարկայ է գարձել:

Ցառւրբերի համար մասնաւոր ուշադրութեան առարկայ է գարձել և այն հանգամանքը, որ Կ. Պօլի ուստահական դեսպան Ջինովիկը՝ Ցարի մասնաւոր հրամանագիտէ Պահանջական գաղտնագրութիւնների կանչուած յատկապէս Արեւելեան Խոդրի համար և իր յապաղումը արդէն ցոյց է տալիս, որ գործողութեան մէջ մտնելու համար յատկագծեր են կաղմւում:

## ՍԵՐԲԻԱ

Քաղաքական աշխարհում բաւականին իրարանց-

ման տեղիք տուեց Պետերբուրգից, Ապրիլ 29, Times-ին հաղորդուած հետևեալ տեղեկութիւնը:

“Աղէքսանդր Բագաւորի ամուսնութիւնից և իր հօր Միլանի մահուանից յետոյ մեծ փոխուսութիւն կատարուեց Սերբիայի արտաքին քաղաքականութեան մէջ՝ ստիպելով նրան Ռուսիայի գիրկը նետուելու։ Իրերի այդ նոր դրութիւնը բնականաբար շատ մեծ բաւականութիւն է պատճառել Պետերբուրգում, բայց Ռուս կառավարութիւնը նպատակ չունի բաւականանալ միայն այն իրողութեամբ, որ Սերբիան վերջապէս չորս ոտքով իր փարախն է մտել, այլ Պետերբուրգում հիմա մեծ ջանք է անուում այդ դրութիւնից օգտուելու ապագայ բարդութիւնների համար։”

Լուր կայ որ Ռուսական պատերազմական նախարար Վուրապատկինը մշակել և առաջադրել է մի ընդհանուր յատակագիծ համոզելու համար Սերբիային՝ որ մի գաղտնի զինուրական գաշնազրութիւն կապի Ռուսաստանի հետ։ Առաջարկուած գաշնազրութիւնը ոչ միայն ընդհանուր գործակցութեան մասնաւոր պայմաններ է բովանդակում՝ զանազան պատահականութեանց հանդէպ, այլ նոյն իսկ շեշտում է քաղաքական այն առաւելութիւնները, որ պիտի ունենայ Սերբիան։ Սերբիան պատերազմական կարգարութեան մէջ պիտի մտնի Ռուսիայի համաձայնութեամբ։”

Ռուսիան իրեն է վերապահում զօրքերի բաժանման իրաւունքը Սերբիայի հիւսիսում, ուր գործողութեանց խարիսխները պիտի մտելու համաձայնութիւնը առաջարկուած յարմար տեսնի։ Յապաղումից խոյս տալու համար՝ երկու դէպումն էլ Ռուսիան Սերբիային պիտի մատակարարի պահանջուած նիւթական օգնութիւնը, Միւս կողմից Ռուսիան պիտի ապահովի Սերբիական թագաւորութեան անկախութիւնը և նրա պահանջումներին բաւականութիւն տայ — այսինքն իպէկի մէջ պատրիարքութիւն հաստատելու այնքան ժամանակ՝ որքան որ Թիւրքիան իր եւրոպական տիրապետութիւնները կպահպանէ, իսկ Թիւրքիայի բաժանման ժամանակ Սերբիան պիտի ունենայ Նովի — Բազարը և Մակեդոնիայի մի մասը։”

Սոյն հիմունքների վրայ լուրջ բանակցութիւններ են կատարուում Ռուսիայի և Սերբիայի միջեւ։”

Եւրոպական շատ թերթեր կասկածանօք վերաբերուեցին դէպի այդ լուրը։”

Վիեննայում այդ տեղեկութեանը ամբողջովին հաւատք չընծայուեցաւ, որովհետև սերբիան իր ներքին ինդիրներովն է զբաղուած, իսկ Ռուսիան՝ Ծայրագոյն Արևելքով։”

Պետերբուրգի քաղաքական շրջաններում այդ թերթակցութիւնը շնովի նկատուեց՝ Բալքանեան պետութեանց մէկի կողմից։”

Վիեննայի Սերբիական դեսպանը աշխատեց Սերբել լուրի ձևը, բայց ոչ էութիւնը։”

Գրանսիական թերթերը շատ բնական և անխուսափելի նկատեցին այդպիսի մի համաձայնութիւն Ռուսիայի և Սերբիայի միջեւ։”

“Ռուսիայի և Աւստրիայի միջեւ կատարուած 1897-ի համաձայնութեան առարկան գեռ չի հրատարակուել, որպէս զի գիտցուի թէ ներկայ գաշնազրութիւնը որ քան հակասական է առաջինին, ասում է Տեհատ-ն. եթէ նոյն

իսկ Times-ի լուրը հերբուի, գարձեալ սերտ համաձայնութիւնը Ռուսիայի և Սերբիայի միջեւ, ինչպէս նաև Բուլղարիայի և Ռուսիայի — մնում է գլխաւոր ազդակը Բալքանեան քաղաքականութեան։”

Times-ը այդ տեղեկութեան առթիւ գրած խըմբագրականում, ի միջի այլոց, ասում է. ԴԱՅԴ լուրը զարմանը չպիտի պատճառի այն երկրներում առնուազն, ուր ծանօթ են Ռուսիայի գիւտանագիտական մեթուներին, մասնաւորապէս Վիեննայում։ Ռուսիան իրաւ համաձայնութեան մէջ է մտել Աւստրո—Հունգարիայի հետ աշխարհի խաղաղութիւնը պահպանելու — երաշխաւորելով։ Statut զան Բալքանեան թերթակցում, բայց Վիեննայի պետական անձեռը շատ լաւ են ճանաչում իրենց արեւելեան հարեւանը, որպէս զի գիտցած և համոզուած լինեն, թէ այդ պիտի մի համաձայնութիւն Ռուսիային կապի այնքան ժամանակ, որքան որ նա հարկաւոր է իր շահիրին։ Մինչև ցարդ այդ համաձայնութիւնը շատ լաւ գործեց, և մեծապէս նպաստեց խաղաղութիւնը պահպանելու մի այնպիսի երկրում, ուր ցեղային, կրօնական ատելութիւնները գեռ բուռն են, գիւրին բոցավոռուելի և որ տեղից ծագած կայծը պիտի հրդեհէր ամբողջ Եւրոպան։ Ուրեմն Աւստրո—Ռուսական համաձայնութեան հետ։ Պարզ է որ խաղաղութիւնը այդ կողմից կորցրել է իր արժէքը։”

Times-ի տուած լուրը հաւանականութեան և կարելիութեան ամէն հող ներկայացնում է։ Սերբիայի ներքին յուղումնալից վիճակը և արտաքին դրութիւնը — այդպիսի քայլը եթէ ոչ բոլորովին անհրաժեշտ գէթանիսուափելիութեան շրջանի մէջն են զնում իրեն։ Պաշիչն գեռ ամիսներ առաջ գետերբուրդ գնացած ժամանակ այս ինդերը յուղուել էր երկու կողմից էլ։ Եթէ այդ գաշնազրութիւնը տեղի ունենայ — Սերբիայի գիրքը, առնուազն, կլինի դէպի Ռուսիան այն, ինչ որ էր այդ տէրութեան գիրքը գէպի Աւստրո—Հունգարիան, գեռ 1882-ին, Միլան թագաւորի օրօք։

## ԲՈՒԼՂԱՐԻԱ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԻԱ

Բուլղարական Յեղափոխութեան 25-րդ տարեդարձը (Ապրիլ 20) մեծ ոգեգորութեամբ տօնուեցաւ իշխանութեան բոլոր կողմերում և այդ հանգամանքը շատ յուղումների առիթ տուեց։ Արարողութիւնը ըսկըսուած ժամանակ՝ Սօֆիայի մէջ ցոյցեր կատարուեցան իշխան Ֆերդինանտի գէմ։ Ատենախօսներից մին նրան անուանեց „Թուրք փաշան“, մի ուրիշն էլ՝ „Ցարի կօշիկները ներկող“։ Յետոյ մի ահագին բազմութիւն հաւարուեց իշխանի պալատի առաջ և սկսեց քարերով ջաղարեկութիւնը յաղափակելու ունկցի Ֆերդինանտը, անկցի Ցարի սպասաւորը՝ աղաղակելով։ Զիաւոր ոստիկանները միջամտեցին, տեղի ունեցաւ արիւնալից ընդհարում և շատերը ձերբակալուեցան։ Ամբողջ Բուլղարիայի մէջ ատելութեան խիստ զգացում է տարածուել գէպի Ռուսիան, որ օգնեց և խորհուրդ տուեց Մակեդոնական Յեղափոխական Կօմիտէի պատրագութեաների ձերբակալմանը, և աւելի դառն զգացումներ գէպի Ֆերդինանտը

Ուուս կառավարութեան խորհուրդներուն հետևելուն համար: Յեղափախական Կօմիտէն աշխատում է յուղում յառաջ բերել ընդդէմ տիրող նախարարութեան և իշխանի: Բուլղարիան իր ամբողջութեամբ փոթորկալից վիճակ է ընդունել:

Մակեդոնական կեդրոնական Կօմիտէի օրդան „Réforme“-ը՝ „Յեղափախութեան մէջն է մեր յոյսը“ յօդուածութիւնը իրերի գրութիւնը հետևեալ կերպով է պատկերացնում:

„Ուուսիան և Աւստրիան ցանկանում են պահպանել ներկայ զրութիւնը, որպէս զի իրենց վերջնական նպատակներին հասնեն. այսինքն՝ Մակեդոնացիներին, թրքական ստրուկներից՝ Ուուս կամ Աւստրիական ձորտեր դարձնեն: Մենք, Մակեդոնացիներոս չենք ուզում ստրուկներ լինել ոչ Ուուսիայի, ոչ Աւստրիայի և ոչ էլ Բուլղարիայի: Մակեդոնիան Մակեդոնացիներին: Միայն յեղափախութիւնը կղաքաթեցնէ եւրոպական դիւնագիտութիւնը իր քնարքութիւնից, ինչպէս որ նախապէս արաւ Յունատառանում, Ուումանիայում, Սերբիայում և վերջապէս Բուլղարիայում: Մենք չենք ցանկանում որ Մակեդոնիան կտրուի թիւրքիայից և արուի Բուլղարիային: Մենք ցանկանում ենք որ Մակեդոնիայում հաստատուի Խաղաղութիւն. և ներմուծուին այն բարենորոգութեանը, որ խոստացուած են Բերլինի Դաշնադրութեան 22<sup>ու</sup> յօդուածով“:

„Information“-ը (14 Մայիս) հաղորդում է, որ բաւական ժամանակից ի վեր բանակցութիւններ են հաստարում Ուուսիայի, Գրանսիայի և Խոալիայի միջե, Մակեդոնական ինդրի ասթիւ: Նոյն աղքիւրին նայելով՝ Հռովմում այն հարծիքն է տիրում, որ շուտով Մակեդոնիայում իրերը սուր ընթացք կառնեն և գուցէ այդ հանգամանքը պատճառ դառնայ ամբողջ Աբելեան խնդրի բացմանը:

Բուրբեշի Ուուս զինուորական կցորդը Ցարի մի ննդիադիր նամակն է տաւել իշխան Գերդինանատին, որով վերջինս Հրատիրում է, Յուլիսին, Պետերբուրգ այցելելու: Առ նկատում է մի հակառակացութիւն Աբբազիայի: (Wiener Tagblatt, 15 Մայիս):

Neuer Wiener Tagblatt (Մայիս 23) լուն է Սօֆիայից, որ ուսական գնդապետ Լէօնդեիչը յատուկ պատգամաւորութեամբ Սօֆիա և Բելգրադ պիտի այցելէ, որպէս զի: Ուուսիայի, Հովհանորութեան տակ՝ Բուլղարիայի և Սերբիայի միջև զինուորական իրական համաձայնութիւն առաջնութիւն առաջ:

Վոյն աղքիւրն ասում է, Բելգրատի. Ուուսական զինուորական կցորդ Հետապըշէլը Սօֆիա է կանչուած, որպէս զի: օգնի այդ նախատիկ իրագործմանը:

Այրջն լուրերից երևում է, որ Սօֆիա է եկել Նաև Միջերկրական ծովի առևտնական նաւատորմի հրամանատար Բիբիլել, որպէս զի: Համաձայնութիւն կայացուի Ռուսիայի, և Բուլղարիայի միջև, Առանայի և Բուրգազի մուգի: Նաւահանգստերի առթիւ, որոնք Ուուսիան ուզում է նաւային գործողութեան հիմունք անել Ա. Պոլսի դէմ:

## ԱԼԲԱՆԻԱ

Ալբանացիները նորից շարժման մէջ են մտել: Ալբանիան Ալբանացիներին՝ նշանաբանը ընդունողները այժմ սկսել են ամեն կողմէր յեղափախական ներքին

կազմակերպութիւններ առաջ բերել: Ակրչելս իրենց բոլոր գործիչներից կազմաւած մի ընդհանուր կօնդրէս գումարութեալ խորհրդածութեան առնելու իրենց դրութիւնը և անելիքը:

Կօնդրէսը, ի միջի այլոց, ուղարկել է մի ուղերձ իտալական պարլամենտին, որով բացատրում են թէ իրենց Լատին ցեղից են, ուստի ինդրում են Խոալիայի պաշտպանութիւնը: Ուղերձը ասում է, որ անկախ Ալբանիան միակ թումբն է ընդդէմ Սերբիայի և Բուլղարիայի ուսնանձութիւններին:

Հոսում ապագամաւորների մի խումբ, որոնք ալբանական ազգն են ներկայացնում, արդէն մի կոչ ուղղեցին Խոալիական բոլոր պատգամաւորներին՝ մէջ բերելով Գարեթազդիի խօսքերը թէ՝ „Ալբանիան իմսէ“, և խնդրում են յանուն քաղաքութիւննեան և Լատինական ցեղի եղայրակցութեան, նախաձեռնութիւնների ստանձնելու որպէս զի պետութիւնները: Ալբանիան անկախութիւնը ձանացն և այդպիսով վերջանայ թրքական ստրկութիւնը ու բարձրանայ մի ահազին թումբ Աւստրիայի, Սերբիայի և Բուլղարիայի փառասիրական ձգումներին դէմ:

Խոալիան Ալբանիայի մէջ ոչ միայն քաղաքական, այլև անտեսական մասնաւոր շահեր ունի, ուստի ի հարկին նա անտարբեր չպիտի մնայ դէպի Ալբանիան և Ալբանացիները:

## ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ

Յունաստանի և Ռումանիայի թագաւորների միջև ամսոյ 13—14-ին, Ալբանիայում, տեղի ունեցաւ մի տեսակցութիւն, որ շատ մեկնութեանց առիթ տուեց բոլոր երկրներում: Ընդհանուր կարծիքն է, որ եթէ երկու թագաւորների հանդիպումը քաղաքական անմիջական հետեւանք չի յառաջացնիլ, գեթ յայտնի աստիճան այժմեանից երեւան է բերում մտքերի այն գրութիւնը, որ արդէն գոյութիւն ունի երկու երկրների տիրապետող շրջաններում: Մասնակի այդ նշանները ժամանակի ընթացքում խոանալով՝ կարող են վերածուել քաղաքական մի նոր հսկանքի, և ոյդպիսով բարքաներում յառաջ կգայ մի ուրիշ ուղղութիւն, կամ բոլորովին հակառակ սլաւոնական ղեկավարները, որոնք այդպիսով միջաց կունենան հայեացներ փոխանակելու բարքանեան թերակղզու վերաբերմէր: Նշանակալից է նաև այն հանդամանքը, որ այդ այցելութիւնը կատարում է Աւստրիական հօղի վրայից, և ճիշտ այն ժամանակ ուերբ համալատոնականութիւնը եռանդադին կերպով վերածնութեան մէջ է մտել Ուուսիայի աւելի կամ նուազ պաշտպանութեան ներքոյ:

Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով է, որ շատ լուրջ թերթեր ել կարծիք յայտնեցին. թէ՝ Յունաստանական մերձեցումը մի թումբ կլինի հաշումալաւոնական ուննանդգութեան գույնութիւնը ընդհանուր կազմականաց կարժանանայ. թէ Պոլսոյ և թէ

Կազմակերպութիւններ առաջ բերել: Ակրչելս իրենց բոլոր գործիչներից կազմաւած մի ընդհանուր կօնդրէս գումարութեալ խորհրդածութեան առնելու իրենց դրութիւնը և անելիքը:

Վեհենայի դահլիճների կողմից:

Աթէնքի տիրապետող շրջանների կարծիքը արտացոլացնող Աստր Շերթը հաստատում է որ՝ “Արբազիւայի տեսակցութեանց նպատակն է երկու պետութեանց մէջ եղած կապերը ամրապնդել և ընդհանուր հասկացողութեան գալ՝ հանրային պաշտպանութեան տեսակէտից՝ բուլղարիայի փառասիրական ռանձգութեանց գէմ”:

— Ի՞ալքանեան երկիր, հրաբխային երկիր՝ — շատ ձիշտ են նրատիչի խօսքերը: Ոի երկիր, մի ժողովուրդ մինչև լիւ իր տէրը չլինի՝ իր դոյութեան առաջին նըպատակը պիտի անի ո հրաբխային երկիր՝ լինելը:

Ի՞ալք Ռումանիան և Յունատանը, գէմ նրանց զեկավարիչ տարրերը, այժմ աշխատում են մասսմբ հեռու մնալ հրաբխային ժայթքումներից և տւելի լաւ են համարում „տարածական քաղաքականութեան մէջ չմտնել” Մակեդոնիայում և պահպանել statu quo-ն”:

Ի հարկէ տանջուղները ոչ կարողոսի որդիներն են ոչ էլ գէորգի. Նրանք ամէն բանից առաջ արքայական տան ամրութեան և նրա շահերի հաստատութեան վրայ պիտի մտածեն և դրանից յետոյ է, որ դիւրութեամբ էլ պիտի փառակեն թէ ինչպէս այդ մասնաւոր շահերը, հակառակ իրականութեան, հարիւրաւոր զոհեր տուող խեղճ վաղախների և Յոյների շահերի հետ բոլորովին համանիշ են, մին միւսին լրացուցիչ, թէև տիրապետողի լեզուն գիտէ թէ այդ ինչ ասել է. Խեղճ տանջըւողն է միայն, որ այդ երգերին պարզմորէն լսում, հաւատում է և ապա՝ կծկում . . . :

Երբ երկու թագակիրներ այժմանների ներքոյ ճիգ են թափում ցեղային անտեղի հակառակութեանց վրայ հիմնուելով մի փատած Statu quo պահպանել — դա որքան որ դատապարտելի, բայց զարմանաւի չէ, նախապէս գիտնալով թէ քաղաքական և ժողովրադական խնդիրներում միշտ ինչ յետին մտքերով են առաջնորդուում տիրապետող դատակարդի ներկայացուցիչները: Սակայն, բարեբախտաբար, իրերի ուղղութիւնը և նրանց առած ծաւալը բնաւ կախումն չունին ոչ թագակիր շահագործողներից և ոչ էլ նրանց արբանեակ պաշտօնեաներից, և այս ամէն տեղ, ու ամէն ժամանակ,

Բուլղար, Սերբ, Վալախ, Յոյն . . . բոլորն էլ համանան շահեր ունեն — ազատուել թօքական լծից, և թագակիրները եթէ իրենց ժողովրդի կամքի և բաղձանաց արտայայտչու լինեին, դէպի այդ կողմն է որ նորանոր բաղկացութիւններ կազմելու համերաշն գիծ պիտի ընդունէին և ոչ թէ իրենց արարքներով Մեծ Մարդասպանի ձեռքերը զօրեղացնէին և նրա անուղղակի ընկերը, գործակիցը դառնային ու այդպիսով երկարացնէին տանջանքը նոյն այն թշուաւների, որոնց անունով, սակայն, իրենք խօսում, տեսակցութիւնները, գաշնազրութիւններ են կազմում:

## ԱԿԱՏՐՈ — ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վաղաքական աշխարհը առանձին հետաքրքրութեամբ էր սպասում Աւստրո-Հունգարիայի արհեստանոցներում վազուց ի վեր ընդհանուր են դարձած: Մարտական այդ ոյժը յայտնի կերպով երես եկաւ գեռ 1897-ին: Առաջին անգամն էր որ այդ թուոկանին կովկասի մայրագաղաքում ասպարէղ մտաւ կողմակերպուած բանուորական մի մարմին, որ յանդուգն կերպով, Փիզիքական ոյժի վայ կրթնած, սկսեց ցոյց տալ նուս միապետական կառավարութեան որ ինքն էլ գասակարդ է և իր գասակարդային պահանջները ձեռք բերել կարողանալու համար՝ որոշուծ է պայքարել: Պարբերա-

արտասանեց մին իր այն ճառերից, որոնցմանվ պարբերաբար նա գրաւում է ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը:

Մասնաւորելով խօսքը Արեւելեան Խնդրի մասին, Աւստրո-Հունգարական նախարարը ասել է, որ 1897-ի Աւստրո-Հունգարական համաձայնութիւնը շատ սահմանափակ նշանակութիւն է ունեցած եղել, աւելի բացասական քան դրական: Այդ համաձայնութիւնը „ամենաբութիչ” դեղ չի եղել Մօտիկ Արեւելքի բոլոր վտանգների առաջը առնելու համար: Երկու կայսրութեանց մէջ համուձայնութիւն է եղել բազում բազում միաւութեան մասը մնալու բալքանեան թերուկզու նկատմամբ, որ բացակառուելիք նիւթերով միշտ լիքն է: Ճետևաբարը, երկու կողմի համաձայնութիւնը և երբէք չի կարող արգելք լինել զանազան անակնունելի դէպերի յառաջացմանը:

“1897-ի համաձայնութիւնը — շարունակում է կումսը — նպատակ ունէր՝ Ռուսիայի և Աւստրիայի փոխադարձ բարեկամութեամբ պահպանել խաղաղութիւնը Բալքաններում գանազան վտանգաւոր հանդիպումի դէմ, բայց ոչ թէ ջնջել ժայթքումները. ուստի սիրամարդային քաղաքականութիւն կլինէր անտես անելու ոչ բարեկամական այն նշանները, որոնք վերջներս երեան եկան: Նոյն խէլ վտանգաւոր պիտի լինէր այդ բոլորը անգիտանալ, որովհետեւ այն ժամանակ մենք մեզ յուսականութեան մատնած կլինէնք և յանկարծակին եկած, մի օր էլ դիմացնիս կունենայինք մի դրութիւն, որ մեզ համար անկարելի կլինէր ընդունիլ: Ցնորական առասպել է որ մենք հողային տարածումն ենք վինտուում Մօտիկ Արեւելքում, ի վեաս ուրիշների . . . բայց մենք չենք կարող թոյլ տալ որ և ունձգութիւն կատարուի գոյնի դէմ, կամ տեղի ունենայ մի այնպիսի փոփոխութիւն, որով մեր կենսական շահերը վնասուեին: Սրանք են մեր Արեւելեան գլխաւոր կէտերը և մենք այդպէս էլ պիտի մնանք: Սակայն մենք չենք կարող մի բռնէ անգամ վարանիլ ամենառանցագին դիրք բռնելու ընդդէմ ու է փորձի, որ առարկայ կունենայ յեղաջրջել քաղաքական ներկայ դրութիւնը և նորը առաջ բերել”:

Աւստրիական նախարարի խօսքերը որքան որ պարզ և մեկն են՝ Աւստրիայի գիրքը մի անգամ էլ որոշ կերպով ցոյց տալու համար Արեւելեան Խնդրի մէջ, սակայն այդ բռնորդ նոր չեն և շատ վաղուց յայտնի ամէն նըրանդ, որոնք համար արգելքը ընդհանրապէս և Մօտիկ Արեւելքով մասնաւորապէս:

Ա. Ա. — Պ.

Հ Ե Զ Ա Կ

Կ Ա Վ Կ Ա Ս Ո Ւ Մ

## Թ Ի Ֆ Լ Ի Զ

Ի՞անուորական մասնակի գործադուները գործարաններում և երկամուղու արհեստանոցներում վազուց ի վեր ընդհանուր են դարձած: Մարտական այդ ոյժը յայտնի կերպով երես եկաւ գեռ 1897-ին: Առաջին անգամն էր որ այդ թուոկանին կովկասի մայրագաղաքում ասպարէղ մտաւ կողմակերպուած բանուորական մի մարմին, որ յանդուգն կերպով, Փիզիքական ոյժի վայ կրթնած, սկսեց ցոյց տալ նուս միապետական կառավարութեան որ ինքն էլ գասակարդ է և իր գասակարդային պահանջները ձեռք բերել կարողանալու համար՝ որոշուծ է պայքարել:

Ամսոյ 22-ին՝ Հունգարական Պատուիլիքակառութեան Արտաքին գործոց Մասնաժողովին մէջ՝ կոմս Գօլուխովսկին

բար տեղի ունեցան մի քանի գործադուլներ։ Որքան էլ որ գործաւորների պահանջները բացարձակ արդարութեան վրայ էին հիմնուած, այնու ամենայնիւ կառավարութիւնը չուզեց որ այդպիսի երևոյթներ կրկնուին. ուստի ձեռք առեց իր սրբադորժած սոսկալի հաղածանները. էլ այնուհետև խուզարկութիւն, բանտարկութիւն, աքսոր սովորական բաներ դարձան։ Գաղտնի սոտիկանների և լրտեսների համար արդիւնաբեր գործ բացուեց։ Կարծեա դրանց թիւը բիշ էր, որ կարծ ժամանակի մէջ եռապատկուեց, և այդպիսով դիմաւոր բաղաբները ծածկուեցան լրտես—սոտիկանական ցանցերով։

Ի՞անուորական շարժումը մեզ մօտ հետեւեալ սկզբնաւորութիւնն է ունեցել։ Դեռ 1896-ին, Ռուսաստանի Խ. բաղաբից չորս Ռուս բանուորներ եկան և մտան աշխատելու բաղաբիս երկաթուղու շտեմարանը։ Որպէս առաքեալներ Բանուորական Ընդհանուր կուսակցութեան, Նրանք սկսեցին ոյժ տալ պրօպագանդային, և համեմատաբար շատ կարծ ժամանակամիջոցում կարողացան բաւականին մեծ թուով ընկերներ ունենալ, այնպէս որ հետեւեալ տարին՝ 97-ին բաղաբիս Աէրա արուարձանում նոյն իսկ Բանուորական Տօնը՝ Մայիսի 1-ը տօնեցին։

98-ի Բանուորական Տօնը ևս աւելի շքեղ կերպով տօնուեցաւ. դեռ վաղ առաւտեան բանուորները բաղաբի ամէն կողմերից խումբ խումբ դիմում էին դէպի Աէրայի դաշտը։ Ժամը 10-ին դաշտի տարածութիւնը լցուել էր բանուորների բազմութեամբ։ Գործադիր Վարչութեան նախագահը ոգեսրիչ մի ճառով յայտնեց, ի միջի այլոց, որ կազմակերպութեան մէջ մտնող բանուորների թիւը եռապատկուել էր և արդէն մի քանի հաղաբի հասել, որ հաստատուել էր մի գրադարան՝ ընտիր գրքերից բաղկացած և գանձարանի մէջն էլ բաւականին գրամ ապագայի գործադուլների ժամանակ կարիք ունեցող ընկերներին օգնութեան համար։

Չանցաւ շատ ժամանակ, վրայ հասան գործադուլները։ Գործաւորների մտքը արդէն շաղախուել էր սօցիալիստական խորով, տիրող կարգերը առաջուան պէս լրութեամբ տանելը այլ ևս անկարելի էր դարձել։

1896, Յունվար 14-ին, Թիֆլիզի գլխաւոր փողոցները անսովոր կերպարանը էին առել, բանուորները խումբեր կազմած տաք տաք վիճաբանում էին և յանկարծ մի ընդհանուր նշանի վրայ բոլորն էլ ուղղուեցին դէպի երկաթուղու կայարանը։ Ըուտով այդ տեղ համախմբուեցին հաղարաւոր բանուորներ, ուրանը երկաթուղային զանազան պաշտօնեաների հետ միացած բողոքում և պահանջում էին յետ առնել այն նոր օրէնքները, որ երկաթուղային վարչութիւնը գործադրութեան մէջ էր մտցրել յայտնի նախարարական կարգադրութեան։

Այդ նոր օրէնքները հետեւեալներն էին — աշխատութեան ժամանակ վնասուածներին բժշկուելու և ապրելու ոչ մի նպաստ չպիտի տրուա։ Բանուորները հիւանդութեան ժամանակ իրաւունք չունենան ձրիապէս օգտուելու հիւանդանոցներից նրանք զրկուին տարին երեք անգամ ճանապարհորդելու համար ձրի տոմսակներ ունենալուց։

Նախարարական այդ օրէնքները անձայն չպիտի տարուէին, և բանուորները բողոքելով՝ իրենց իրաւ-

ունքի սահմանի մէջն էին։

Չնայելով ոստիկանների բազմութեանը մի քանի հազար բանուորներ ձեղքեցին ժանդարմերիայի կազմած գիծը և իրենց առաջը պատահած ամէն ինչ ջարդու փշուր անելով՝ մտան վարչութեան սենեակը։ Ընդհանուր կառավարիչը սարսափահար՝ դողի մէջ էր իր կեանքի համար, որ արդէն մի թելից էր կախուած։

Կառավարիչը հեռախոսով օգնութիւն խնդրեց կառավարչապետ Գոլիցինից։ Ընմիջապէս մի գումարտակ հեծելագունդ և մի քանի վաշտ զօրք կառավարչին օգնութեան հասան և բանուորներին շրջապատեցին։ Սկսեցաւ ընդհարումը։ Բանուորները ձեղքեցին զօրքերի և ժանդարմերի շղթան՝ անցան առաջ և գրաւեցին երկաթուղու գիծը — մարդատար գնացքների երթեկութիւնը դադար առաւ։ Մի գնացք էլ, որ Թիֆլիզ էր բերում նորակոչ զինուորներին՝ ստիպուեցաւ յետ դառնալ առաջի կայարանը և այնտեղ սպասել։

Ճիշտ այդ ժամին հեռուից լսելի եղաւ բանուորների կանանց ձայնը և Ճիշը. Նրանք եկել էին իրենց դժբախտ ամուսիններին օգնելով՝ սկսեցին կարկտի նման քարեր տեղալ կինու օրների և ոստիկանների վրայ։ Զօրքերի թիւը նորից աւելացաւ. Երբ մի քանի անգամ ոհարուածներու թափելուց յետու զինուորները անկարող եղան կոռի հրապարակը մաքրել և միւս կողմից կառավարչապետ Գոլիցինի համար ատուգութիւն եղաւ, որ բանուորները մինչեւ իրենց արեան վերջն կաթելու պիտի ընդդիմադըրեն — այն ժամանակ վերջնս անձամբ բանուորներին դիմելով երեք օր ժամանակ խնդրեց, որպէսզի նախարարութեան հեռագործով հարցնի և ըստ այնմ վերջնական պատասխան տայ իրենց։ Բանուորները այդ պայմանին համաձայնելով իրենց տները ցրուեցան։

Չանցած մի օր նախարարութիւնից հրաման ստացուեց չգործադրել նոր օրէնքները, մինչև Պետերբուրդից մի յանձնախումբ գայ գործը քննելու համար։ Ինչ ասել կուզի՝ որ միապետական կառավարութեան նախարարի հրամանը մնաց մեռած տառ. և այդպիսի յանձնախումբ երբէք չեկաւ։ Դա սովորական մի խայծ էր բանուորներին ժամանականակարապետ հանդարեցնելու աւելի ուղիղ ասած՝ խաբելու։

Չնայած երկուստեր ընդունուած այդ զինադադարին՝ աշխատանքը չվերակսուեց եօթն օր շարունակ իսկ այդ 7 օրուայ ընթացքում, երկաթուղային պաշտօնեաները սոտիկանների հետ միասին մտնում էին բանուորների տները և նրանց առանձին առանձին դուրս քաշելով տանում էին և աշխատեցնում։ Խուզարկեցին մի քանի հաղար բանուորական տներ, ձերբակալեցին 300 հոգի, որոնցից 44-ը ճանցուեցան որէնքի դէմ ըմբուտացուներ։ և այդ 44 հոգին էլ մի օրուայ մէջ բանտից անյատացան. թէ ուր ուղարկուեցան, ինչ եղան յայտնի չէ։ Դրանց մէջն էր և յայտնի տօցիալիստ պրօպագանդիստ Գոլիցինը։ Պարբերական խուզարկութիւններ և գրանց հետևանքն եղող անընդհատ բանտարկութիւնները տեսելու մեջ առաջ բանտիցին աւելի բան 6 ամիս, այս եղաւ Թիֆլիզում առաջի կազմակերպուած գործադուլի հետեւանք։

1899-ի Մայիսեան տօնը ևս առելի փառաւոր կերպով տօնուեցաւ, որովհետև այդ օրը ցուցարանների մէջ, բաց և երկաթուղային բանուորներից, կային նաև բազմաթիւ գործադրուներ էլ զանազան գործարաններից։ Այդ օրը, նախագահը շեշտեց մի տարի առաջ

իրենց տարած յաղթանակը, ցոյց տուեց կազմակերպութեան անհրաժեշտութիւնը՝ բոլոր գործաւորների մէջ և հրաւիրեց նրանց կազմել կերպոնական մի արկղ, ուր պիտի հաւաքուէին ընկերների տուած դրամական բաժինները, որպէս զի ապագայում կարող լինէին, գործադուլների ժամանակ, աւելի մեծ չափով օգնութեան հասնել իրենց կարօտ ընկերներին:

Այս բոլորի հետեւանը այն եղաւ, որ 1900 Մայիս մէկի տօնախմբութեանը, մինչև այդ ժամանակ չտեսնուած գործաւորների բազմութիւն խմբուեցաւ: Դեռ երկու օր առաջ կազմակերպիչ Մասնախմբի միայն պարագլուխները և առաջնորդները գիտէին տօնի տեղը: Մասնուելու ընդհանուր կասկած կար: Թէև օրը անձրւու, բայց հանդիսատեղին էին շտապել հազարաւոր անձրեց բազկացած խուռն բազմութիւն: Ուրախութեան աղաղակների մէջ, ոկեցցէն ների որոտալից թնդիւնով, յանկարծ օդի մէջը սկսուեցին ծածանուել կարմր գրօշակները, մայր գրօշակի վրայ նկարուած էին կարլ—Մարքսի, ֆրիդերիխ—Էնդելի և Լասալի պատկերները, տակը Հայերէն և Ռուսերէն տառերով գըրուած ոքոր ազգերի պրօէտարիատներ՝ միացէ՛ք»:

Մի քիչ յետոյ Մար գրօշակի տակ՝ փոքրիկ հողակոյտի վրայ շինուած ամբիոնը բարձրացաւ նախագահը և բարձր ձայնով սկսեց կարդալ ընդհանուր հաշիւը: Այդ հաշուից երևեց, որ ոչ միայն կազմակերպութեան մէջ են մտել երկաթուղային բոլոր բանուորները այլև զանազան գործարանների մէջ աշխատողներն էլ: Ստացուել և տարածուել էր աւելի քան 1500 սօցիալիստական բրօշիւրներ և կարդացուել մի քանի տասնեակ գասախոսութիւններ սօցիալական զանազան հրատապ խնդիրների մասին:

Դասի վերջաբանում նախագահը մատնանիշ արեց իր գլխին վրայ ծածանուող գրօշակի վրայ եղած նկարներն և ասաց որ՝ „Մենք այս մեծ մարդկանց աշակերտներն ենք և հետեւողները, սրանք են որ ցոյց տուին ամբողջ աշխարհին, թէ բանուորն էլ մարդ է, նա է հարստութիւն ստեղծողը, նրա բազուկների շընորհիւն է որ միինոնատերերը լողում են ճիխութեան մէջ և կեղեքիչ պաշտօնեաները՝ յղիութեան. այդ դասակարգն է որ այսօր ասպարէզ է մտել և իր արիւնը ծծողներին հետ վճռական պայքարի բռնուել. մօտիկ ապագան ցոյց կտայ որ իրենց պայքարը ապարդիւն չի անցել և յաջողութեամբ կպսակուի՞»:

Նախագահից յետոյ ամբիոն բարձրացան ուղիւ Ճառախօսներ էլ, որոնցից ամէնքն էլ շեշտեցին կազմակերպութեան կարեւորութեան և պայքարի աւելի լայն ծաւալ տալու անհրաժեշտութեան մասին:

Բոլոր բանուորները այնուհետև, ուրախութեան աղաղակներով, խումբ խումբ քաղաքի զանազան կողմերից իրենց բնակարանները ցրուեցան, ամէնքն էլ գիտակից լինելով այն մեծ գերին, որ վերապահուած է իրենց՝ պատմութեան ընթացքում:

Առաջին գործագուլից ճիշտ տարի ու կէս յետոյ տեղի ունեցաւ երկրորդը: Բանուորների համար այլ ևս գաղտնիք չէր այն հանգամանքը, թէ ինչպէս անխիղճ կերպով շահագործում էր իրենց աշխատող—ոյժը, կապիտալիստ գործատէրերի կողմից: Միթէ իրենք մարդ չէին և ամենափոքր հանգստութեան գէթ

կարիք չունէին, իրենց նուիրելու մտաւորական զարգացման և գոնէ համեստ ըջանակով վայելելու այն, ինչ որ կոչում է կեանք: Օրական աշխատել 14—15 ժամ՝ առողջապահական տեսակէտից միանգամայն մահաբեր արհեստանոյների մէջ և էն էլ մի քանի կոպէկ վարձ ստանալու համար — դա այլևս անհղութեան հասնել իրենց կարօտ ընկերներին:

Եւ արդարեւ, բանուորները ընդհանուր ժողով կազմեցին, բոլորի համաձայնութեամբ խմբագրեցին իրենց պահանջների նուազագոյնը. այսինքն՝ վերացնել երեքշաբթի և շաբաթ օրուայ աշխատանքները, աւելացնել վարձագինը և կրծատել աշխատանաց ժամերը: Եւ իրենց միջից ընտրուած մասնախումբը ընդհանուրի ցանկութեան արտայայտիչը և թարգմանը եղաւ՝ երկաթուղային վարչութեան ղեկավարիչների առաջ: — Կամ պէտք էր բանուորների պահանջը ընդունել, և կամ պատրաստուել մաքառելու երկրորդ գործադուլ գէմ: և որովհետեւ վարչութեան վարիչների համար գեռ շատ թարմ էր առաջին գործադուլի միշտակը, ուստի անպայման կերպով ընդունեցին Մասնախմբի առաջարկները և այդպիսով գործաւորների միացած ու կազմակերպուած ոյժը այս անգամ էլ խաղաղ կերպով յաղթանակը տարաւ իր արիւնը ծծող վամբիոների գէմ:

Այս տարուայ Մայիս 1-ը արիւնլուայ տօն եղաւ: Թիվլիզի բանուորները իրենց տուած զոհերով բոլորովին նոր դարագլուխ բաց արին կովկասի եռուն կեանքի մէջ: Տեղի ունեցած արիւնհեղութիւնը ամենազօրել նշանաբանը պիտի լինի այն նորամուտ գարին, որ կովկասը վճռել է տօնել իրեւ իւր երջանիկ միացման շըրջանը Ռուսաստանի հետ: Թափուած արիւնը ապացոյց է որ Անդրկովկասը վճռել է մինչև վերջ անձայն չճզգմուելու Ցարերի կունկի տակ:

Ա երջին տարիներս Անդրկովկասը արդիւնաբերական զարգացման շրջանը թեակոխելով, հետեւաբար, մեզ մօտ էլ երևան պիտի գար իրաւագուրկ, շահագործուողների այն ազդակը, որ կոչում է Պրօլէտարիատ: Արդիւնաբերական զարգացումը մէջ մօտ առաջ է գնում շատ արագ: ուստի իրեն անբաժան դասակարգային կոիւը արդէն սկսել է աւելի քան սուր կերպաւրանը ստանալ:

Պաշտօնական տեղեկութեան համեմատ Անդրկովկասը գեռ 1893-ին ունէր ցուցակագրուած 22,030 բանուոր, իսկ 1896-ին՝ 55,668: այդ տեղից պարզ է որ Յ տարուայ ընթացքում բանուորների թիւը կրկնապատկութել էր, կազմելով ամբողջ ազգաբնակութեան 60/0-ը: Թէ և բանուորների ընդհանուրը թիւը զեռ ահագին չէ, բայց ինկատի պիտի առնել այն հանդամանքը, որ նրանք կեղերուացել են Յ—Յ կէտերում:

Ա դիվլիզը՝ որ կովկասի սիրուն է, թէ և արդիւնաբերական առաջնակարգ կերպուն չէ, միւս քաղաքների հետ համեմատելով, բայց նա ևս պերճախօս թիւեր է տալիս: 1896-ին նա ունէր 254 գործարան, 4561 բանուորներով. իսկ 1900-ին գործարանների թիւը հասնում է 413-ի, բանուորներին՝ 13,764-ի:

Այս բոլորից յետոյ զարմանալի չէ որ կովկասի մէջն էլ արդէն լայնածաւալ մուտք են գտել Սօցիալ-դեմոկրատիայի սկզբունքները և գործունեկութեան ուազագիծը, զի կովկասի կեանքը արդէն տուել է հողը: Կարիքների և շահերի միատեսակութիւնը այստեղի բանուորներին միացրել է Ռուսաստանի զանազան կեղերուն-

ներում համախմբում բանուորների կազմակերպութեանց հետ, և այդպիսով կազմուել է սահուսական Սօցիալ — Դեմոկրատ Բանուորական Կուսակցութեան հզօր բանակը, որի մի ճիւղն էլ կազմում են Կովկասի բանուորները:

Դեռ Ապրիլի սկզբներին Թիֆլիսում լուր էր տարածուել, թէ բանուորները այս տարի վճռել են Սայսի Մէկը հրապարակապէս տօնել: Կառավարչապետը դողի մէջ էր ընկել: Ապրիլ 16—21-ին իւր հրամանով Թիֆլիսից հեռացուեցան 1,000-ի չափ բանուորներ. մի քանի օր քաղաքը գրել էր, բառին բուն նշանակութեամբ, պատերազմական դրութեան մէջ և կարգադրել էր որ քաղաքի շրջակայքում դժուուղ, օրինակ՝ Գօրիում, ջորքերը զօրանոցներում պատրաստ գտնուին, զէնքի տակ, ի հարկին Թիֆլիս համախմբուելու, չնայելով որ Թիֆլիսում արդէն 60,000 զօրք իրենց բանակատեղում զէնքերը ձեռքբերնին՝ առաջին ձայնին պիտի սպասէին կոտորածը սկսելու:

Կառավարութեան երկիւղը մասամբ անտեղի չէր. վասն զի վերջին օրերը զիմաւոր փողոցների պատերին փակցուեցան և ձեռքէ ձեռք հազարաւոր օրինակներով տարածուեցան կարմիր ազգարարագեր՝ Հայերէն, Ռուսերէն և Արացերէն լեզուներով: Այդ ազդարարագերը թէ բողոք էին բանապետութեան դէմ և թէ պահանջներ բոլոր ազգութեանց բանուորների կողմից:

Ապրիլ 22-ին, կիւրակէ օրը, Թիֆլիսի Յօլգատարքի - Բազար կոչուած տեղում տօնավաճառ կար: Այդ հանգամանքից օգտուելով, այն տեղ էին գումարուած 2,000-ի չափ Հայ, Ռուս և Արացի բանուորներ: Ժամը 11-ին բոլոր բանուորները միատարր խուվը կազմելով սկսեցին ծածանել կարմիր դօօշ: Մի քանի բողոքալից ճառախօսութիւնից յետոյ սկիցէ ներով ուուառանելի այդ տհագին բազմութիւնը Ալէքսանդրեան պարտէղը մտնելով՝ սկսեց դիմել դէպի կառավարչապետի պալատը: Հարիւրաւոր բանուորներ անընդհատ գծեր կազմելով, ուուռանելի այս կառավարչապետի պալատը: Հարիւրաւոր բանուորներ անընդհատ գծեր կազմելով, ուուռանելի արձագանդ էին տալիս իրենց ընկերակից ճառախօսի խօսքերին, որ նստած բանուորների ուսերի վրայ՝ ճօճում էր կարմիր դրօշը: Յանկարծ ամբողջ բազմութիւնը սկսեց աղաղակել սանկցի բունապետութիւնը և ապա սկսուեց ձայների խրացուցիչ դոչիւն.... միայն համանալի էին լինում հետեւալները. Պահանջում ենք 8 ժամուայ աշխատանցօք օր, պատասխանատուութիւն ձեռնարկողների, ժողովրդական ներկայացուցչութիւն, մամուի և գումարուածների ազատութիւն, ազգութիւնների հաւասարութիւն: Ակեցցէ Սօցիալ — Դեմոկրատիան, կեցցէ Մայիս 1-ը»:

Երբ բանուորները գոյոհ աշխատում էին յառաջանալ դէպի պալատը, մասնաւոր տներում թագուած զօրքերը, սոտիկանները, կազմակերը և ժանդարմենները իրենց որջերից դուրս գալով կատաղած կերպով յարձակուեցան ցուցարար բանուորների վրայ: Տեղի ունեցաւ մի զարչուրելի տեսարան.... կուհւը երկուստեք յամառ էր: Զօրքերի հրացաներին և սրերին բանուորները սպատասխանում էին այն ամէնով, ինչ որ ձեռքերնին էր ընկնում: Աւելի քան մէկ ժամ կուիւր շարունակուեց: Այժմ առաջ բանուորները վերջապէս ստիպուցան տեղի տալ: Վիրաւորուածների և վեստուածների թիւը մի քանի հարիւրի է համում. 10-ի չափ էլ սպանուած են. սպանուազների թուումն է նաև քաջ դրաշակակիրը, չնայելով որ նա երեք տեղից գնդակ էր ընդունել և կօղակները իրենց ձիերի

ոտքերի տակն էին առել, բայց հերոսը գարձեալ միշտ աղաղակում էր սկզբու Մայիս 1-ը: Սպանուած են նաև երկու սոտիկան և մէկ կօղակ. վիրաւորուած են սոտիկանապետը, երկու թաղապետ, 15-ի չափ սոտիկաններ և մէկ կօղակ: Բունակալ Յարի բռնակալ ներկայացուցիչ Գոլիցինը նախադաս էր համարել խոյս տալ քաղաքից այդ պահուն: Այդ օրը միայն ձերբակալուողների թիւը համում է 150-ի, որոնց մէջը բաւականին մեծ թուով ուստողներ և ուսանողուհիներ էլ կան:

Զնայած որ կառավարութիւնը ամէն տեսակ ստորին միջոցների էր դիմել բանուորական շարժման մասին նախապէս հասարակութեան մէջ սուտ լուրեր տարածելու, իբրև թէ նրանք մտադիր են այդ օրը աւարի տալ բոլոր քաղաքը, և նոյն իսկ ծովտեալ սոտիկաններ և զանազան լրտեսներ տեղական հագուստ հագած քաղաքի զանազան մասերում այդպիսի փորձեր էլ արեցին, այնու ամենայնիւ անկարող եղան ամենահոքը չափով իսկ հասարակութեան համոզների ուժը ամենայնիւ անկարող եղան ամենահոքը չափով իսկ հասարակութեան համոզներուն որ բանուորները այդպիսի գիտում կարող էին ունենալ: Բացի բռն շահագործող գասակարգից, հասարակութեան բոլոր խաւերը մեծ համակրութիւն էին դրա տալիս դէպի բանական համակրութիւն էին դրա գործի բանակը և ողջունում այդ նորածին կոռուպութիւնը աղջունում այդ նորածին կոռուպութիւնը:

Բանուորները հզօրագոյն ոյժի առաջ ընկառւեցան և ցրուեցան — դա հոգ չէ. Նրանք միայն բողոքելու գիտում ունեին, յանկանում էին ցոյց տալ հասարակութեան և կառավարութեան, որ իրենք համականում են իրենց իրաւունքները և վճռել են այդ իրաւունքները աշանազարհի տալ. և այդ բանը յաջողուեց վառաւոր կերպով: Փոյթ չէ որ նորա զոհէներ տուին — դա նախագուռն է այն լայն ձանապարհի, այն նոր կեանքի, դէպի ուր տանում է Սօցիալ - Դեմոկրատիան, և մենք սրտանց ողջունում ենք մեր կովկասի բանուոր եղբայրների տարած յաղթանակը և նրանց հետ էլ միասին աղաղակում ենք՝ սկզբու Մայիս 1-ը:

Ա Բ Մ Է Ն

### ՆԵՐԾԱԿ ԳԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մայիս, 1901

Անցեալ ամիս այս տեղ կատարեալ սարսափ էր տիրում, Ուսու կառավարութիւնը գլուխը կորցրած՝ չգիտեէր ինչ անէր: Ամսից աւելի էր որ Ռուսաստանը ապստամբութեան նշաններ էր ցոյց տալիս Ուսանողների Խլթառումները և այս տարի ընդունեցին մինչև այժմ չտեսնուած մի ընդարձակ ծաւալ: Ուսանողներին համակրութիւն էին Ռուսաստանի բոլոր յառաջադէմ տարրերը սկսած աղաղականիտներից մինչև սօցիալխոտները, բայց ինչ որ նորօրինակ մի երևոյթ տեսնուեցաւ — այդ այն է՝ որ գործաւորները բուռն համակրութիւն ցոյց տուին և մասնակցեցան այն բոլոր շարժումներին, որոնք տեղի ուղղ ունեցան թէ այս տեղը և թէ Սոսկուածութիւն:

Ուսուսատանը ներկայում լոկ մի երկրագործական երկիր չէ: Կա բաւական ժամանակակից ի վեր արդէն թէ նաև կովկասի է խոշոր արդիւնագործութեան շրջանի մէջ: Զանազան գործարանների թիւը հիմա մի քանի հազարի է հաս-

նում, իսկ գործաւոր — բանուորների լեզոնը բաղկանում է աւելի քան երկու միլիոնից: Կերկայում Ուստասաւանը գործաւոր գաղափարի այնպիսի մեծատարած կերպներ ունի ինչպէս Պետերուրդը, Մոսկուան, Լոդզ, Կիև, Եկատերինոսլաւը, Ուստագ — Դօնի վրայ, Բագուն և այլն — որոնք Ուստասատանի ապագայ ընկերային յեղափոխութեան ոյժերի շահմարանը պիտի ներկայացնեն:

Վայոր Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում սօցիալիստական պրոպագանդան ահագին ծաւալ է ստացել: Երազացիները մինչև այժմ Ուստասաւանը բժամիտ մուժիկի երկիր էին առուանում — Հիմա այդ մուժիկ (մարդուկ) գեւզացին այլ ևս ոչ մի էական նշանակութիւն չունի ընկերային յեղափոխութեան վահանանի տեսակէտից: Պետերբուրգի և այլ մեծ կեղրոնների գործարանական բանուորներն են՝ որ կոչուած են մեծ և վճռական գերիացաւու:

Շատ կարելի է որ անցեալ ամսուայ, ինչպէս և մօտիկ ապագայի արիւնչեղութիւնները իրենց անմիջական հետեանը չունենան բաղաբական յեղափոխութիւն և Ցարի կառավարութիւնը կարող լինի իր զինուորների հրացաններից արձակած գնդակներով խեղդել նորածին ազատութեան ձայնը — դա հոգ չէ, զի անկարելի պիտի լինի պատմութեան ընթացքյատ դարձնել և ասպարէզ մտած գործօնները բոլոր վիճակները նախանշաններն են: Ուսանողներս, ի հարկէ, միայնակ առած մի մեծ ոյժ չենք ներկայացնում, մանաւանդ որ մեր մէջ կան զանազան դասակարգի շահերը պաշտպանող ուստանող — ընկերներ էլ, հետեւարար շատ խնդիրների մէջ իրարուց բաժանուած ենք: բայց չնայելով դրան՝ ուսանողներիս բարոյական ազգեցյութիւնը այս և այն չափով, հասարակութեան բոլոր խաւերի վայաւելի բան զգալի է և անուրանալի. միւս կողմից՝ գործարանական բանուորների համակրութիւնը և գործակութիւնը այնպիսի մի ոյժ է, որ ճակատագրական կերպով կոչուած է Ուստա բանապետութիւնը տապալելու: Կիւի, Ուսկուայի և այս տեղի ահագին կոիւները փողոցներում և եկեղեցիների բակերում՝ այնպէս յուղեցին ամրող Ուստաստանը որ մինչև այժմ իրար անհաշտ զանազան խմբեր և կուսակցութիւններ միացան և իրենց առաջն ցանկութիւնը արեցին, այսպէս թէ այնպէս, նախ թօթափել տիրող բունապետական լուծը, որպէս զի մարդ կարողանայ մի քիչ ապատ շունչ քաշել, և ընկճուած աղքութիւնները միջոց ու իրաւունք ունենան գոնէ ազատ կերպով իրենց լեզուով գրել, խօսել, գպրոցներ ունենալ և թերթեր հրատարակել:

Այստեղի գործող սօցիալիստները ի հարկէ շատ լաւ դիտեն որ լոկ քաղաքական աղատութիւնը գեռ չերիք չէ, բանուոր և գեւզացի գասակարգը զրանից շատ բան չեն վաստակիլ և նիւթականապէս ապահովուել, բայց նրանք համազուած են՝ որ անհրաժեշտ է ունենալ նախ բաղաբական աղատութիւն, որպէսզի իրենք՝ սօցիալիստները կարող լինեն և միջոց ունենան աղատորէն գրել, բարողել ժողովներ կազմել և սիստեմաթիկալար կազմակերպել գործարանական բոլոր բանուորներին: Առանց այս անհրաժեշտ աղատութեան անկարելի է մեժտութիւնական կազմակերպութիւն յառաջացնել գործաւոր աշխատաւորների մէջ: Կրկնում ենք՝ այդ համոզմունքին հասան թուով բաւական շատ և այն երիտասարդները, որոնք տարիներից ի վեր զբաղուած էին միայն տեսական հարցերով, օրինակ „Արժէք“՝ „Արտազրութեան աղղակներ“ և այլն: Այդ-


եռանգուն երիտասարդները ու հրապարակախօսները մի կողմից ձգեցին իրենց ապարդիւն բանակոփիւները և բոլորն էլ ընդ գրկեցին բաղաբական յեղափոխութեան գաղափարը և գործունէութեան մէջ մտան:

Դուք, երեխ, իմացաք հեռագրեցից որ Ուստասանողների հետ ձեռք ձեռքի տուած գործում են բաղմաթիւ չայ, Լեհացի, Վրացի, Ղատկիցի... և Գինանդացի ուսանողները: Մի հայ ուստանող՝ Բիրատեսան անցքերի ժամանակ Կիւսի զինուորական գատարանի կողմից մահուան պատմի գատապարտուեց, որով հետեւ իրեն հայ հոյող ուստապարի ապացին ապտակէ էր տուել: Գատապարտութեան լուրը տարածուելուն պէս բան հազար հոգուց բարձրացած ցուցարանների բաղմաթիւնը կառավարական հաստատութիւնների առաջն էր համախմբուել: Ապանացող վասնդի առաջ կառավարութիւնը անկարս եղաւ վճիռը գործադրել և հրացանի բանել մեր բաշ ընկերոցը, թէ և այդպիս մեղ մտ կատարուեցաւ:

Այս երկու ամսուայ ընթացքում մօտ 4000 հոգի բանդարկուեց: Ուստաստանը գարձէլ է Ուլթանի երկիր: Սակայն մեզ մէջ վհատութիւնը չկայ և պիտի շարունակենք ամեն յարմար պարագաներում:

### ԽՕՑԻԱԼԻՍՏ ՈՒՍՏԱՆՈՎ

### ՍՈՑԻԱԼԻՍՏ ԹՈՒՄԻԱՑՈՒՄ



Հարիւր բան միլիոն ժողովուրդ պարունակող ահագին ովկիւնուող փոթորկի մէջ է մտել: Ուստա կառավարութեան համար այլևս բոլորովին պարզ է, որ բոլոր մեծ բաղաբները ապստամբական մի մի կայաններ են: Հակակառավարական ցոյցերը, փողոցների մէջ տեղի ունեցած ընդգիւմրութիւնը կօգակների մորակներին — այս բոլորը ակներե ցոյց են տալիս, որ Ուստա ժողովուրդը, գեթ նրայառաջադիմական տարրել են անտարբեր չգտնըւ և բարբարոս ոյժի գէմ իրենց յեղափոխական ոյժերը ասպորէզ բերել: Տեղի ունեցած ցոյցերով ոչ միայն ուսանութիւնն է որ կաւում է միապետական բանապետական կառավարութեան գէմ, այլ և մեծ բաղաբների բանուորները, և այս երեսոյթը սակայն անսպասելի չէր այն ամենքի համար, որոնք ուշագրաւթեամբ հետեւամբ էին Ուստաստանում, վերջին 15—20 աարիների ընթացքում, կատարուած տնտեսական շարժումներին:

Մի կողմից հարկերը աւելանում էին և ժողովուրդը անկարող լինելով իր ուժապառ հողից անհրաժեշտ հունձք ստանալու — ենթարկուում էր պարբերական սովերի. միւս կողմից՝ ժողովուրդի բաւականին ստուար մի մասը հարկադրուում էր թողնել իր հողերը և պանդիստել գէպի մեծ բաղաբները և արդիւնագործական կեղրոնները: Կառավարութեան մնումն էր, այսպէս թէ այնպէս, զարգացնել խօսը արդիւնագործութիւնը Ուստաստանում, որ անգործ և անհաց մնացած գիւղական աղատութիւնը միջոց ու իրաւունք ունենան գոնէ ազատ կերպով իրենց լեզուով գրել, խօսել, գպրոցներ ունենալ և թերթեր հրատարակել: Եւ ահա 15—20 տարուայ ընթացքում հարիւրաւոր միլիոններ գրեցին Ուստա և մանաւանդ օտար կապիտալիստները, որոնք թէ շահագործութեան ենթարկեցին երկի հանգային հարստութիւններ և թէ բաղմաթիւ, դանա-

զան տեսակ, գործարաններ ու արհեստանոցներ բացեցին։ Շուտով արդիւնագործութիւնը և գործարանները գերաշխու տեղ կունենան Պուտ հասարակական կեանքում։ Այդ հանգամանքը մեծապէս զարկ տուեց նորանսր ուրիշ ձեռնարկների՝ դրամատների, երկաժուղիների, խոշոր առեւտրական նաւերի զարգացմանը։

Բայց նոյն այդ գործարանական արդիւնագործութիւնը պատճառ տուեց հասարակական մի այլ երկոյթի մեջ զարգացրեց, կազմակերպեց գործարանական բանւորների մի մեծ թիւ, գոնէ այնքան մեծ, որ հէնց մօտիկ ապագայում, եթէ կանոնաւոր կազմակերպուած լինի—կարող է վճռական դեր խաղալ միապետական կառավարութեան անկման գործում։ Բայց դժբախտաբար բանուոր գասակարգը ներկայում գեռ հարկ եղածին պէս կաղմակերպուած չէ և բաղաքական յաջող յեղափոխութեան համար անհրաժեշտ կարգապահութիւնի չունենալու։

Բուն սօցիալիստական կանոն աւոր պրօպականադան Բուտ բանուոր գասակարգի մէջ մտաւ ընդ ամենը վերջին 8—10 տարուան մէջ և պէտք է խոստովանիլ որ բաւականին արդիւնք յառաջ բերաւ։ Ճիշտ է, յեղափոխական գաղափարը Ռուսաստանում գոյութիւն ունէր գեռ 1825-ին, երբ առաջի անգամ, այսպէս կոչուած Դեկաբրիստները, գլխաւորապէս սպաներից բաղկացած, պատրաստել էին մի տեսակ ապստամբութիւն։ Դրանք լոկ ազատամիտ, ազնիւ երիտասարդներ էին, որ չէին ուղում տանել միապետական կամայականութիւնները և բանապետական կարգերը։ Այդ անյաջող փորձը վերջացաւ բանտով և Սիբիրով։ Այնուշետև 60-ական թուականներից նորից սկսում է շարժականութեան մէջ մտնել Ռուս ինտելիգենտ դասակարգը՝ գլխաւորապէս ուսանողութիւն։ 70-ական թուականներում ուժեղ և լայն ծաւալ է ստանում Նարոդովայից զատ գործ էր ածում և տեսորական միջոցներ, որպէս զի ուժով ստիպէ կառավարութեան տալ ժողովորդին ամենաանհրաժեշտ բաղաքական ազատութիւնները նարոդովութիւններից ուժը հասել էր մինչև այն աստիճան, որ նրանք ազգեցութիւնը նոյն իսկ կառավարութեան զեկը իրենց ձեռքը առած մինհատընների վրան։ Սակայն երբ 1881 թ. նրանք սպանեցին Աղեքսանդր Բ. Ցարին — իրենք էլ թուլացան և ի վերջոյ նոր կառավարութիւնը վերջնական յաղթութիւն տարաւ։ Նարոդովութիւնը յեղափոխական կուսակցութեան պարտութեանը մասամբ օգնեց այն հանգամանքը, որ կուսակցական բոլոր գլխաւոր գործիչները միանդամից ձեմքակալուեցին, իսկ նրանց թիւը, որպէս պարագաների և հասնում էր ոչ աւելի բան մի բանի տամնեակների, բայց դա չէր գլխաւոր պատճառը, որ Նարոդովովութիւնը ձևաց այնպէս էր եզրակացնուում, որ նրանք մտածում էին նախ բաղաքական յեղափոխութիւն առաջ բերելով՝ գոյութիւն ունեցող կարգ ու կանոնը տապալել և նրանից յետոյ բաղաքական նոր կարգեր հիմնել ժողովորդի կամքի ու շահերի համաձայն։ Իսկ փաստը, դժբախտաբար, այն էր, որ մինչդեռ Ռուս յեղափոխականները հարիւրներով կախաղան էին բարձրանում, հաղարներով բանտերը լեցւում, իսկ ինքը — ժողովուրդը, համարեա թէ ոչնչէ չէր անում և ամենափոք չափով իսկ բոլորում կառավարութեան պարագաները սպանութիւնների վրա գործութիւնը առաջ գլխաւոր գլխական մասնակին ուղարկուած էր այսպէս պարագան կողմից գործարանական բանուորին։

Թուականների խոշոր գործարանական կեղրոնները՝ մեծ բաղաքներում համարեա խմբուած չէին, ինչպէս ներկայում են, տասնեակ հաղարներով բանուորներ։ Եւ այն ժամանակուայ Ռուս յեղափոխականները, ամենաքիչ բայց գլխաւոր գաղաղի տարրը գասակարգ չէ այնտեղ կան և հողազուրկ գիւղացիների միավական կեղրի չափացները։ Ռուս գիւղացին այնպիսի միատարր գասակարգ չէ, ինչպէս որ նոյն Ռուս բանուոր գասակարգը, որը ամբողջովին զուրկ է որևէ սեպհականնութիւնից և որ ամբողջովին շահագործում է գործարաններում։

Ուրեմն մինչդեռ գործարանի մէջ գիւղացները կարող են ունենալ միևնույն տնտեսական շահերը — 1 ընդհակառակը բուն գիւղացին իր շրջանում բաժանում է տարբեր շահեր ունեցող գասակարգերի։ Փոքր գեր չի խաղում և այն հանգամանքը, որ գիւղական ազգարնակչութիւնը ամեն տեղ և մանաւանդ Ռուսաստանում սոսկալի նախապաշարական միավական գաղափարաներով, յետագիտական ու պահպանողական շահագործում է ամերիկան բաղաքակրթուած բնակիչների հետ շփուելը — համեմատ առ բարգացման կողմից գործարանական բանուորին։

Այս բոլոր հանգամանքները, դրա հետ միասին և 90-ական թուականներում մեծ ծաւալ ստացած արդէն խոշոր արդիւնագործութիւնը պէտք է առաջ բերէր բնականաբար, այդ գործունէութեամբ և ծրագրով յեղափոխական կուսակցութիւններ։ Եւ յիրաւի ներկայում գոյութիւն ունի սօցիալ-դէմոկրատիա լուսականութիւնների, որոնցից ամէն մէկը միւսներից տարբերում է մի բանի աննշան տեսական հարցերով, քան թէ գործնական ուղղութեամբ։ Ներկայում Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր սօցիալ-դէմոկրատիա կամ սօցիալիստ յեղափոխական կուսակցութիւնները կեղծրոնացրած են իրենց գործունէութիւնը և զեկը միւսներից և թէ ինտելիգենտ դասակարգը, առաջ կարգերում սօցիալիստական ուսմունքը, բաղաքական ազատ կարգերի նշանակութիւնը և այլն։

### ԲԻՒՐԱԿԱՆԵԱՆ (Հարունակելի)

### ԲՈՒՐԳԱՁԻ ՍՈՂՈՒՆԵՐԸ

Որո՞նք են Հայ յեղափոխական շարժումների ծնուցիչ պատճառները։ Ի՞նչ է եղած թրբական կառավարութեան հետեւած քաղաքականնութիւնը։ Ի՞նչու Համար հայկական կոտորածները այնքան ընդարձակ ծաւալ առան և Եւրոպան չաճապարեց միջամտել — այդ բարդ և նադիրները ժամանակին շատ զբաղեցրել են և գեր շարունակում են զբաղեցնել Հայ և Եւրոպացի աղէմ։ Այդ ժամանակ դեռ չէր հային սութագութիւնը և այլն։

մենալաւ գլուխները։ Սակայն բուլղարիայի բուրգազք քաղաքի քահանայ Տէր Կարապետ Սահակեանը այդ կարծիքին չէ։ Նրա համար բոլոր այդ խնդիրները շատ պարզ են, ուստի եկեղեցու բեմը բարձրանալով այն տեղից աշխատել է, մի որոտալից քարոզով։ պատմական իրողութիւնները իրենց շրջանակի մէջ գնել և իրեւ բարձրից ներշնչուած մի անձ ջանացել է համոզել իր բանաւոր հօտին թէ՞ ու Հայ ժողովրդի զիսով անցած աղէտներին միակ պատճառը հայ սրիկաներն ։ յեղափոխականներն են, թէ թուրքը մեղաւոր չէ, անոնք էին որ կատղեցուցին Սուլթանը, և անիկա ալ ինչ պիտի ընէր, իր երկիրը սրիկաներուն ձեռքու չպիտի թողուր ե՛ա, ատոր համար ալ թուրք ժղովրդին հրաման տուաւ որ զանոնք ու անոնց հետևողները կոտորեն, որպէս զի երկիրը խաղաղի . . . , և եթէ քանի մը անմեղ Հայեր ալ սպաննուեցան, այդ ալ սոսկ հայ յեղափոխականներու պատճառաւ էր . . . անոնք են երկրի մէջ եղած խառնակութեանց և հայ ժողովրդի բոլոր թշուառութիւններու պատճառաւ . . . անոնք հայութեան թշնամին են . . . ամէն հայու պարտականութիւնն է զանոնք հալածել . . . Այդ սրիկաներէն աս քաղաքին մէջ ալ քանի մը հատ կան, հարկաւոր է զանոնք դուրս վզնդել, կառավարութեան յանձնել . . . որպէս զի արս քաղաքն ալ մաքրուի և հսս ալ յեղափոխութիւն շրնեն և մեր թշուառութեան պատճառ չդառնան։ Որովհետեւ մէնք աղատ երկրի մէջ կապրինք. անոնք կուզեն հոս ալ մէկ Տաճկաստան դարձնել։

Տարեւախտաբար թէ գդբախտաբար, գտնուել են մարդիկ, որոնք համակարծիք չեն եղել Տէր բարայի ասածներին, թէև ամենայն պատկառանօք մինչև վերջ լըսել են նրա իմաստութեան բարկածայթ որոտումներին . . . և մտածել որ եղել են մարդիկ՝ որոնք Տէր կարապետի թափած ակունքները չեն աճապարել քաղելու . . . օ՛, ինչ սրբազնութիւն։

Հետևեալ օրը, մի քանի գաղթական Հայաստանցիներ մի հանրագրութեամբ բողոքում են եկեղեցու բեմից արտասանած խօսքերի դէմ՝ նոյն երեն քահանային և թաղական խորհրդին, և փաստում՝ ի միջի այլոց, որ կոտորածներ պատահեցան նոյն խկ այնպիսի տեղեր, ուր սրիկաներ՝ բնաւ չկային։

Տէր Կարապետը այդ բողոքը իր քահանայական ամենագիտութեան դէմ է համարում, ուստի թարգմանելով Բուլղարերէնի գնում է ինսամբով պատրաստուած մի առանձին աղերսազրի մէջ և հետև առած իր քթից ընկած Միսակ Թորիկեանին, Յակոր Մրապեանին, Մակար Յովհաննէսեանին, և Յովհաննէս Սահակեանին շիփի շիտակ գնում է տեղական գաւառապետի մօտ և նրան Ներկայացնում մի խնդրագրի։ Գաւառապետը աղերսազրի և նրան կցուած վաւերագրի թարգմանութեան ընթերցումից չի կարողանում հասկանալ թէ խնդրատուները ինչ են ուզում, ուստի բերանացի հարցնում է թէ՞ ո՞ինչ է իրենց ուզածը։

— Այս քաղաքին մէջ կարգ մը խովարար յեղափոխականներ կան, կաղաչներ որ այդ անձերը այս տեղէն աբսորէ, որովհետեւ անոնք մեր բարեպաշտ ժողովրդին միտքը կը պղտորեն, չեն թողուր որ եկեղեցի դան, կը խաբեն, հաւաքումներ կը ընեն և անոնց յեղափոխական բաներ կը խօսին . . . օր մը անոնք, եթէ առաջը չառնուի, զէնքերով եկեղեցի պիտի գան և զիս սպաննեն . . . աստոնք քանի մը գաղթական սրիկաներ են; որոնք կուզեն մեր քաղաքն ալ ապականել ու յե-

ղափոխութիւն լնել . . .

Իւրի գտաւապետը զարմացած հայ քահանայի և նրա ընկերակիցների արած խնդիրը . . . ամօթէ է, ամօթ՝ յանդիմանութիւնը երեաներին զարկելով՝ գուրք է վոնտում ատեանից։

Այս գեռ հերկ չէր։

Մակեդոնական կոմիտէն բուրգազքի մէջ էլ բաց էր արբել զինավարժութեան սրահներ։ Մի քանի Հայեր օգտագութեամբ իրենց օտարազդի եղեայրակիցների մատակարարած միջոցներից, իրենք էլ սկսել էին զինավարժութիւններ անել նոյն այդ սրահների մէջ։

Այս անգամ ապաշնորհ քահանան և իր արբանեակները ուզում են գործել թուրք հիւպատոսի միջոցով։ — Ասրից բողոքում, ինդրում են տեղական իշխանութիւններին, որ՝ ոթոյլ չտան հայերուն զինավարժութեամբ պարապիլ, որովհետեւ մտագիր են օր մէկտեղ հաւաքուիլ և զէնքերով տեղույս թուրքերուն վրայ յարձակիլ և խովութիւն, կոտորած առաջբերել։ Մակեդոնական կոմիտէի տեղական անդամները միջամտում են և այս անգամ էլ ձեռնունայն յետ են գառնում լիրք քահանան, հայի անունը անարժանաբար կրող իր սողուն ընկերները և Համբահի ներկայացուցիչ՝ հիւպատոսը։

Դեռ չվերջացաւ։

Հայը գտաւածան չի լինի. իսկ եթէ լինի մինչև վերջը կշարունակի, նրա համար զգաստանալ, յետ գառնալ չկայ։

Լարախաղաց կարավելովը, մի կատարեալ գէմագոգ, իր քսակի և իր մեծաքիթ աիրոջ հանգստութեան ու ապահովաթեան համար ձերբակալել տուեց Մակեդոնական կոմիտէի վարիչ անդամներին։

Այդ լսել էին ուլորնը։ Հարկաւոր էր աճապարբել։ Ուստի մի երկար հեռագրով դիմում են իրեն՝ Կարավելովին և նախարարական խորհրդին՝ Սօֆիա, բացատրելով որ Մակեդոնական կոմիտէի նման անձեր բուրգազքի մէջն էլ կան և թուում են Հայ յեղափոխական սրիկաներին անունները։

Կարավելովը հրամայում է տեղական գաւառապետին բացարձակապէս արգիլել Հայերին զինավարժութեան սրահները մտնելու, եղածների մասին քննութիւն բանալ և իրեն տեղեկագրել։

Գաւառապետը իրերը իրենց իսկական շրջանակի մէջը գնելով՝ բացատրում է խնդրատուների ինչ և ինչ լարերով շարժուած լինելը ու այդպիսով պատճառ գառնում որ մի քանի խնդր հայաստանցիներ չեն արտաքսւում բուրգազքից, ուր գժոխային աշխատանքներ քաշելով Հաղիւ կարողանում են իրենց օրապահիկը ճարել և իրենց ընտանիքին շատ ու քիչ օգնութեան հասնել։

Այդ, ըստ ինքեան հարց է ծագում՝ թէ ո՞վ է այդ ամենագիտ քահանան, որ չի խորշում գտաւածանութեան, մատնութեան իսկ գիմելու, իր գաւառապարտելի կրբերին ու գիտումներին յագեցումն տալու։

— Երկար, շատ երկար տարիներ սփորբաւոր կամ համեստ պաշտօն կատարելով սփարեպաշտ ։ . . . մի վարդապետի մօտ՝ ձանձրացած թողել հեռացել է. շատ տարիներ էլ բեռնակրութեան մէջ է փորձել իր բաղդը, այդպիսով հաւաքել է մի քիչ դրամ ու մի քանի էլ գնելով իշապան դարձել։ Ընկերակիցների ազդեցութիւնը երկում է որ պարապիլ չի կայ։

“Ճայնեղ” գառնալով մի բարի օր էլ օծուել դարձել է Տէր կարապետ, անօթ ընտրութեան Հոգոյն Սրբոյ, որ չի մոռացել ձեռնազբութեան օրը դիմին աշաւնակերպ թառելու և իշապսն Կարգս քահանայութեան վերակոչելով՝ Տէր կարապետի փոխելու:

Եւ այս փոքրաւորը, այս բեռնակիրը, այս իշապսն է որ հիմա ընկերային բարդ խնդիրները վըճաելուց չի քաշւում այն եկեղեցու բեմից, որ իր խառնութեան է դարձել:

Միստէ Թոռի կեան (Տեղեկցի): Այս այն գողըն է, որ հինգ տարի առաջ մի կերպ կարողացել էր սպարդել Հնչակեան Մասնաճիւղերից մէկի մէջ՝ գանձապահի պաշտօնով, և հաւաքուած հարիւրաւոր ոսկիները կոկորդը անցրել: Թէ իր գողութիւններով նրան զրամ է հաւաքել, — պաշտօնապէս յայտնի չէ, զի նտերակները, մատեանները կորցրեր է՝ — ինչպէս ինըն է բացատրութիւն տալիս: Հիմա որ իր գողացած փողերով ընդարձակ կարուանների տէր է դարձել, ծխախոտի էլ խանութ բաց արել, ուստի իր առևտրական կապերը, շահը պահանջում են շուտ շուտ թիւրքիս մտնել, դուրս գալ: Իսկ դրա համար հարկաւոր է որ Թուրք կառավարութեան վիրուց շահի... Հաւատարամութեան գրաւական տայ:

Եւ ահա, հասարակական զրամների այս գողն է հիմա, որ իր վաճառակական նպատակներին համելու համար՝ մատնութիւնը, դաւաճանութիւնը իրեն առաջին զէնըն է դարձել: Եւ Թորիկեան գողը այժմ սըրբացել, եկեղեցու կնիքը իր ձեռքն է առել, ազնիւմարդ է դարձել. Իսկ իր շուրջը եղողները խոռովարներ, սրիկներ, ազգակորձան յեղափոխականներ:

Յակոբ Սրապեան (Տեղեկցի): Այս գձուձ արարածը իր ամբողջ կեանքին մէջ սեպհական աշխատանք ասուած բանը չի իմացել: Երկրի մէջ եղել է թուրք ազաների սորուկը և իր անձնական պատիւը նրանց վաճառողը:

94-Թուականից թափառել է Պարսկաստան, Ռուսաստան և խաչագողութիւնների այնպիսի նրբութիւններ երևան բերել, որ Բաֆֆին իր Քաւոր Պետրոսին ամենայն պատրաստակամութեամբ սրան աշակերտելու պիտի տար: Կազ, կոյր ձեւանալ, բազմաթիւ ընտանիքով ծանրաբեռնուած լինել, ահագին հարսութիւնից զրկվել, կախաղանի տակից փախիլ, երկրի մէջ տասնեակ խմբեր լեռների վրայ պահել, կերակրել — սրանը իրեն ամենասովորական թէմաներն են եղել, նայելով տեղին և անձին: Եւ համարսանաւարտ այս խաչագողը հիմա այնպէս է մաքրուել, որ ուզում է ո թիւրքիան աղատել սրիկայ յեղափոխականներից և Հային սովորեցնել որ իր շահը թուրքին պաշտպանելու մէջն է:

Մակար Յովհաննէս սեան (Մշոյ Զիարէթ գիւղից): Ըստանիքով, ազգականով մատնիներ են: Մշոյ դաշտի մէջ մինչև ցարդ ոչ մի մատնութիւն չի կատարուել, առանց որ այդ ցած ընտանիքի անդամները գիտած ու թելադրած չլինէին: Տեռոօրի դաշոյնից խոյս տալով՝ այժմ իր պատեանական արհեստը բուրգազի մէջն է շարունակում....:

(Օ) Հաննէս Ստակեան (Փիլիպէցի): Մի մարդ, գժբախտաբար, որի գոյութիւնը պատիւ չի բերում Փիլիպէցիներին:

\* \*

Յեղափոխութեան, յեղափոխական գաղափարների տարածման մէջ առաջին և վճռական գեր խաղացող գործիքը Գլուխատման Մեքենան (Guillotine) է եղել, ամէն տեղ և ամէն ժամանակ: Առանց Guillotine-ի յեղափոխական շարժաւմը բարեպաշտի քարոզի կնմանի:

Հայ գաւառանները, մատնիները տւելի երես առան, գիտնալով նախապէս որ Հայ յեղափոխականը իր Guillotine-ը դնելու տեղ չունի....

Իայց Նրանք մոռացել են որ եթէ Հայ յեղափոխականը այդ գորկարար, մաքրող, դարեր կրծատող միջցը չունի, նա ունի իր կարմիր գնդակը, դաշոյնը:

Համ համբերեցինք, տւելի լուս մնացինք քան սկզբ էր. Էլ բաժակը լցուեցաւ, հարկաւոր է վերջապէս որ կենաբեր դաշոյնը երևան գայ ու գործի.... զի դա այլեւ բացարձակ անհրաժեշտութիւն է....

ԿՈԱՆԱՀԱՐԵ

Կուսակցութեանս գանձարանում շնորհակալութեամբ ոտացուել են հետեւեալ նուիրատուութիւնները. —

ԹԱՄՐԻՉՈՒ ՀՆՀ Կեդրոնական Մասնաճիւղից՝ անգլ.

15 սկի:

Կինի ՀՆՀ Մասնաճիւղից՝ 30 դոլար. նուիրել են՝ Ա. Ա., Մուսա, Յ. Ղ., Բերդ և Լատ 2-ական դոլ., Մ. Բ., Գէրհատ, Գ. Ա., Ներսէս և Խ. Պ. 1-ական դոլ., Մասնաճիւղի սնդուկից՝ 15 դոլար:

ՈՒՄԹԻՒ ՀՆՀ Մասնաճիւղից՝ 31 դոլ. 50 սէնթ. Նըւիրել են՝

Վ. Ա., Սուր, Խ. Խ., Վրանցով, Պ. Պ., Վեց և Ա. Ա. 2 ական դոլ., Ս. Ս., Յ. Ս., Ե. Մ. և Ա. Ս.: 5-ական դոլար.

ԼՈՐԻՆՍԻ ՀՆՀ Մասնաճիւղից՝ 16 դոլ. 50 սէնթ: Նուիրել են՝

Ա. Ա., Սուր, Խ. Խ., Վրանցով, Պ. Պ., Վեց և Ա. Ա. 2 ական դոլ., Ս. Ս., Յ. Ս., Ե. Մ. և Ա. Ս.: 25-ական սէնթ:

ԲՈՒՐԳԱՅ, ՀՆՀ Մասնաճիւղի սնդուկից՝ 20 լէվ:

ՄԱՐՏ Կօմիտետից՝ 525 ֆրանկ:

ԲԱՆՈՒՈՐ Մասնաճիւղից՝ 10 անգլ. սոկի:

ԲԱՆՈՒՈՐ Մասնաճիւղի դանձարանում շնորհակալութեամբ ստացուել են հետեւեալ գումարները՝

Պրն. Պ.՝ 100 բուրլի, 7 ֆետրուար՝ 1901, անդուրագիր թիւ 32: Պրն. Սագունու միջոցով, Աշոտ Երկաթխմբից հանդանակուած՝ 40 բուրլի, Ապրիլ 4, 1901, անդուրագիր թիւ 38: Պրն. Մուռամուռ Մարմարենցի ձեռքով, թիւ 7 տետրակից՝ 40 բուրլի, 10 Ապրիլ, 1901, անդուրագիր թիւ 42:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —

M. Lambert. — 85, Peckham Rye.

London S.E. [Angleterre].